Digitally signed by GASPARYAN LUSINE 7809730103
Date: 2022.09.20 11:11:03 AMST

Թեմատիկ պլանավորում

Մայրենի 6-րդ դասա

Տարեկան 204 ժամ

Շաբաթական 6 ժամ

Թեմա	Նպատակ	Վերջնարդյունք
Ես և իմ ընտանիքը	• Ընկալել տալ մարդկային/ընտանեկան/ հարաբերություններում բարձր արժեքները • նպաստել անձի ձևավորման գործում ընտանիքի դերի ու նշանակության գիտակցմանը հասնելուն • բառի գործածության հետ կապված գիտելիքի ընդլայնում • ուսուցանել բառին բնորոշ առանձնահատկությունները • ընկալել տալ բառերի ճիշտ ընտրության կարևորությունն ըստ խոսքային իրադրության	• վերարտադրել ստեղծագործության բովանդակությունը • գնահատողական վերաբերմունք դրսևորել հեղինակների վերհուշերի հանդեպ • բնութագրել հերոսներին • ինքնուրույն տեսակետ հայտնել հերոսների արարքների վերաբերյալ • կատարել բառերի ընտրություն՝ ըստ խոսքային իրադրության, տարբերել հիմնական բառապաշարը

Ժամ	Էջ	Դաս
4/1	4-5	Վ.Թոթովենց, «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա»:Բառագիտություն
4/1	4-6	Վ.Թոթովենց, «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա»:Բառի բնորոշումը
4/1	4-7	Վ.Թոթովենց, «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա»:Բառի բնորոշումը
4/1	4-7	Վ.Թոթովենց, «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա»:Բառի բնորոշումը
2/1	8-9	Ս. Խանզադյան, «Որպես նախաբան»: Հայերենի բառապաշարը. Լեզվի բառային կազմը:
2/1	8-10	Ս. Խանզադյան, «Որպես նախաբան»: Հայերենի բառապաշարը. Լեզվի բառային կազմը:
2/1	11-12	Ստ. Զորյան, «Մի կյանքի պատմություն». Հիմնական բառապաշար
2/1	11-13	Ստ. Զորյան, «Մի կյանքի պատմություն».

		Հիմնական բառապաշար
4/1	14-15	Մ. Սարյան, «Գրառումներ իմ կյանքից»: Գրքային բառապաշար
4/1	14-15	Մ. Սարյան, «Գրառումներ իմ կյանքից»: Գրքային բառապաշար
4/1	14-17	Մ. Սարյան, «Գրառումներ իմ կյանքից»: Գրքային բառապաշար
4/1	14-17	Մ. Սարյան, «Գրառումներ իմ կյանքից»: Գրքային բառապաշար
4/1	18-19	Հ. Բեկնազարյան, «Հուշեր կինոդերասանի և կինոռեժիսորի»: Խոսակցական բառապաշար
4/1	18-19	Հ. Բեկնազարյան, «Հուշեր կինոդերասանի և կինոռեժիսորի»: Խոսակցական բառապաշար
4/1	18-20	Հ. Բեկնազարյան, «Հուշեր կինոդերասանի և կինոռեժիսորի»: Խոսակցական բառապաշար
4/1	18-21	Հ. Բեկնազարյան, «Հուշեր կինոդերասանի և կինոռեժիսորի»: Խոսակցական բառապաշար
1/1		Ամփոփում: Ամրակայող վարժություններ
1/1		Թեմատիկ գրավոր աշխատանք 1
2/1	22	Հովհ. Շիրազ, «Հորս հիշատակին»
2/1	22	Հովհ. Շիրազ, «Հորս հիշատակին»
2/1	23-24	Վ. Բաբայան, «Աստղեր»
2/1	23-24	Վ. Բաբայան, «Աստղեր»
3/1	25-27	Վ. Անանյան, «Անձրև»
3/1	25-27	Վ. Անանյան «Անձրև»
3/1	25-27	Վ. Անանյան, «Անձրև»
1/1	28	Վ. Տերյան, «Կարծես թե դարձել եմ ես տուն»
2/1	28-29	Ե. Չարենց, «Մորս համար գազել»: Նկարագրություն.դիմանկար
2/1	28-29	Ե. Չարենց, «Մորս համար գազել»
2/1	29	Հ.Շիրազ, «Մայրս՝փոքրիկ,մայրս՝խեղճ»
2/1	30-31	Հ.Շիրազ, «Մայրս՝փոքրիկ,մայրս՝խեղճ»
3/1	34-35	Գ. Մահարի, «Իմ տատը»: Բազմիմաստ բառեր
3/1	34-35	Գ. Մահարի, «Իմ տատը»: Բազմիմաստ բառեր
3/1	34-35	Գ Մահարի, «Իմ տատը»: Բազմիմաստ բառեր
3/1	36-37	Վ. Դավթյան, «Առաջին հուշ»: Բառի ուղիղ և փոխաբերական իմաստներ
3/1	36-38	Վ. Դավթյան, «Առաջին հուշ»: Բառի ուղիղ ևփոխաբերական իմաստներ

3/1	36-38	Վ. Դավթյան, «Առաջին հուշ»: Բառի ուղիղ և փոխաբերական իմաստներ
1/1		Թեմատիկ գրավոր աշխատանք 2
3/1	40-41	Ստ. Զորյան, «Պապն ու թոռը»: Գաղափար պատմվածքի մասին
3/1	42-43	Ստ. Զորյան, «Պապն ու թոռը»:Գաղափար պատմվածքի մասին
3/1	40-43	Ստ. Զորյան, «Պապն ու թոռը»: Գաղափար պատմվածքի մասին
6/1	45-47	Շ. Ազնավուր, «Ազնավուրը Ազնավուր իմասին»:Բառերի տեսակներն ըստ ձևի և իմաստի հարաբերության. Հոմանիշ բառեր
6/1	45-47	Շ. Ազնավուր, «Ազնավուրը Ազնավուրի մասին»:Բառերի տեսակներն ըստ ձևի և իմաստի հարաբերության. Հոմանիշ բառեր
6/1	45-47	Շ. Ազնավուր, «Ազնավուրը Ազնավուրի մասին»:Բառերի տեսակներն ըստ ձևի և իմաստի հարաբերության. Հոմանիշ բառեր
6/1	45-47	Շ. Ազնավուր, «Ազնավուրը Ազնավուրի մասին»:Բառերի տեսակներն ըստ ձևի և իմաստի հարաբերության. Հոմանիշ բառեր
6/1	45-47	Շ. Ազնավուր, «Ազնավուրը Ազնավուրի մասին»:Բառերի տեսակներն ըստ ձևի և իմաստի հարաբերության. Հոմանիշ բառեր
6/1	45-47	Շ. Ազնավուր, «Ազնավուրը Ազնավուրի մասին»:Բառերի տեսակներն ըստ ձևի և իմաստի հարաբերության. Հոմանիշ բառեր
1/1		Ամրակայող վարժություններ
1/1		Թեմատիկ գրավոր աշխատանք 3
7/1	53-55	Հր. Մաթևոսյան, «Հացը»: Հականիշներ
7/1	55-57	Հր. Մաթևոսյան, «Հացը»: Հականիշներ
7/1	57-59	Հր. Մաթևոսյան, <<Հացը>>: Հականիշներ
7/1	60-62	Հր. Մաթևոսյան, <<Հացը>>: Հականիշներ

7/1	53-62	Հր. Մաթևոսյան, <<Հացը>>: Հականիշներ
7/1	53-62	Հր. Մաթևոսյան, <<Հացը>>: Հականիշներ
7/1	53-62	Հր. Մաթևոսյան, <<Հացը>>: Հականիշներ
4/1	66-67	Ու.Լիվինգսթոն, <<Հոր զոջումը>>: Համանուններ
4/1	66-67	Ու.Լիվինգսթոն, <<Հոր զոջումը>>: Համանուններ
4/1	66-67	Ու.Լիվինգսթոն, <<Հոր զոջումը>>: Համանուններ
4/1	66-67	Ու.Լիվինգսթոն, <<Հոր զոջումը>>: Համանուններ
1/1		Ամրակայող վարժություններ
1/1		Թեմատիկ գրավոր աշխատանք 4
2/1	70-71	Արտադասարանական ընթերցանություն
2/1		Արտադասարանական ընթերցանություն
4/1	70-71	Լեոնարդո դա Վինչի, <<Որդիական երախտագիտություն>>: Բառ և դարձվածք
4/1	70-71	Լեոնարդո դա Վինչի, <<Որդիական երախտագիտություն>>: Բառ և դարձվածք
4/1	70-71	Լեոնարդո դա Վինչի, <<Որդիական երախտագիտություն>>: Բառ և դարձվածք
4/1	70-71	Լեոնարդո դա Վինչի, <<Որդիական երախտագիտություն>>: Բառ և դարձվածք
1/1		Ամփոփում: Ամրակայող վարժություններ
1/1		Թեմատիկ գրավոր աշխատանք 5
1/1		Գործնական գրություն, ինքնակենսագրություն
Թեմա	Նպատակ	Վերջնարդյունք
Իմ տունը Հայաստանն է	• ավանդազրույցների դրական կերպարների միջոցով ձևավորել ուրիշներին և հայրենիքին	• վերարտադրել ստեղծագործության բովանդակությունը • դրսևորել վերաբերմունք հերոսների վարքագծի նկատմամբ

	օգտակար լինելու պատրաստակամություն • ընկալել տալ ավանդազրույցի գաղափարական բովանդակությունը • ուսուցանել բառի կազմությունը, բառի բաղադրիչները (արմատ, ածանց, հոդակապ) • ընկալել տալ հնչյունափոխված և անհնչյունափոխ արմատների տարբերությունը	• բնութագրել հերոսներին, համեմատել նրանց արարքները • բառերը ենթարկել բառակազմական վերլուծության՝ առանձնացնելով արմատները և ածանցները, գտնել հնչյունափոխ և անհնչյունափոխ արմատները • կատարել հոմանշային և հականշային աշխատանք
Ժամ	էջ	Դաս
2/1	80-81	Վարդգես Պետրոսյան, <<Հայաստանի բանալին>>: Բառակազմություն
2/1		Վարդգես Պետրոսյան, <<Հայաստանի բանալին>>: Բառակազմություն
2/1	82-83	Հ.Կարճիկյան, «Հայոց լեզու»: Բառակազմություն
2/1	82-84	Հ.Կարճիկյան, «Հայոց լեզու»: Բառակազմություն
3/1	85-88	«Հայկ և Բել»(ըստ Մ. Խորենացու): Բառի բաղադրիչները. արմատ
3/1	85-89	«Հայկ և Բել»(ըստ Մ. Խորենացու): Բառի բաղադրիչները. արմատ
3/1	85-90	«Հայկ և Բել»(ըստ Մ. Խորենացու): Բառի բաղադրիչները
2/1	90-91	Գ. Էմին, «Պատգամ»
2/1	90-91	Գ. Էմին, «Պատգամ»
1/1	92-93	Մ. Մարգարյան, «Հայրենի մեր հող»
3/1	93-95	«Արշակ և Շապուհ»(ըստ Փ. Բուզանդի): Ածանց
3/1	93-96	«Արշակ և Շապուհ»(ըստ Փ. Բուզանդի): Ածանց
3/1	93-97	«Արշակ և Շապուհ»(ըստ Փ. Բուզանդի): Ածանց
3/1	98-100	«Արա Գեղեցիկ և Շամիրամ»(ըստ Մ. Խորենացու)
3/1	98-100	«Արա Գեղեցիկ և Շամիրամ»(ըստ Մ. Խորենացու)
		Գործնական աշխատանք
1/1	101	Վ. Տերյան, «Չեմ դավաճանի իմ Նվարդին»
2/1	101-103	«Ադոնիս»(ըստ հունական դիցաբանության): Զրույց
2/1	101-103, 105-106	«Ադոնիս»(ըստ հունական դիցաբանության):

		Հոդակապ
1/1	104-106	Հովհ. Շիրազ, «Բալլադ»
1/1		Ամրակայող վարժություններ
1/1	-	Թեմատիկ գրավոր աշխատանք 6
2/1	-	Արտադասարանական ընթերցանություն
2/1		Արտադասարանական ընթերցանություն
Թեմա	Նպատակ	Վերջնարդյունքներ
Հայրենի բնաշխարհ	• պատմական զրույցի և ուսունաճանաչողական բնույթի ստեղծագործությունների միջոցով ճանաչելի դարձնել հայրենի բնաշխարհը • ձևավորել վերաբերմունք հայրենի եզերքի հանդեպ • նպաստել, որ ընկալեն գիտական և գեղարվեստական տեքստերի տարբերությունները • ընկալել տալ բառի կազմությունը՝ որպես բառապաշարի հարստացման միջոց • ձևավորել ճանաչողական կարողություններ	• վերարտադրել ստեղծագործության բովանդակությունը՝ վերաբերմունք դրսևորելով հերոսների վարքագծի նկատմամբ • ճանաչել և գնահատել հայրենի բնաշխարհը • գրել կամ բանավոր ներկայացնել նկարագրողական բնույթի տեքստ • բառերը ենթարկել բառակազմական վերլուծության՝ տարբերակելով նախածանցներն ու վերջածանցները • կատարել տեքստային աշխատանք (գտնել հոմանիշներն ու հականիշները. բառերը փոխարինել իրենց հոմանիշներով) • հորինել փոքրիկ բանաստեղծություն • տեքստային աշխատանք (գտնել հոմանիշ-ներ ու հականիշներ, բառերը փոխարինել համարժեք հոմանիշներով և այլն) • բացատրել համանուն բառերի իմաստները • ստեղծագործական աշխատանք (տրված բառերով և դարձվածքներով կազմել նա-խադասություններ, գրել շարադրություն և այլն) • բանաստեղծության մեջ գտնել փոխաբերական իմաստով գործածված բառերը և կազմել բառակապակցություն
Ժամ	Էջ	Դաս
3/1	107-109, 111	«Նոյ Նահապետի տապանը Արարատի վրա»(ըստ Աստվածաշնչի»: Ածանցների տեսակները
3/1	107-109, 111-112	«Նոյ Նահապետի տապանը Արարատի վրա»(ըստ Աստվածաշնչի»: Ածանցների տեսակները
3/1	107-112	«Նոյ Նահապետի տապանը Արարատի վրա»(ըստ Աստվածաշնչի»: Ածանցների տեսակները
2/1	110	Ս. Կապուտիկյան, «Մասիսին մոտիկ»
2/1	110-111	Ս. Կապուտիկյան, «Մասիսին մոտիկ»
2/1	113	Վախթանգ Անանյան, «Սևանա լիճը»

2/1	114-115	«Սևանա լիճ» (ըստ Հայկական համառոտ հանրագիտարանի)
2/1	115	Գեղարվեստական և գիտական խոսք, կառուցման լեզվաոճական առանձնահատկության ճանաչում
2/1	116-118	Մարգո Ղուկասյան, «Ու՞ր է կղզյակն Սևանա»
2/1	119-121	Ստեփան Կուրտիկյան, «Գեղամա լեռներ, Գեղամա ծով»
2/1	119-121	Ստեփան Կուրտիկյան, «Գեղամա լեռներ, Գեղամա ծով»
1/1	122	Վահագն Դավթյան, «Լիճը»
1/1	123-124	Արագած լեռ, հայրենի բնաշխարհի ճանաչում
2/1	125	Ավ. Իսահակյան, «Արագածին»
2/1	125	Ավ. Իսահակյան, «Արագածին»
1/1	126	Եր. Պետրոսյան, «Դու՝ չցնդող տեսիլք»
3/1	127-128	Հովհ. Թումանյան, «Լուսավորչի կանթեղը»
3/1	127-128	Հովհ. Թումանյան, «Լուսավորչի կանթեղը»
3/1	127-128	Հովհ. Թումանյան, «Լուսավորչի կանթեղը»
1/1		Թեմատիկ գրավոր աշխատանք
3/1	129-130	Նախադասություններ, բառակազմական նշանակության ընկալում, նախադասության տարբերում
3/1	132	Համո Սահյան, «Արաքս»
3/1	132	Համո Սահյան, «Արաքս»

Թեմա	Նպատակ	Վերջնարդյունք
Իմ երկրի ոստանները	• պատմական զրույցի և չափածո ստեղծագործությունների միջոցով ճանաչելի դարձնել հայոց հին ու նոր ոստանները • նպաստել, որ ընկալեն արձակ և չափածո տեքստերի տարբերությունները • ընկալել տալ բառի կառուցվածքը • իմանալ բառի կազմությունը՝ որպես բառապաշարի հարստացման միջոց • ձևավորել վերաբերմունք հայրենի եզերքի հանդեպ	• վերարտադրել ստեղծագործության բովանդակությունը • վերաբերմունք դրսևորել հերոսների վարքագծի հանդեպ • դրսևորել գնահատողական դիրքորոշում հստակ հիմնավորումներով • բառերը ենթարկել բառակազմական վերլուծության՝ տարբերակելով նախադասություններն ու վերջադասությունները • կատարել տեքստային աշխատանք (գտնել հոմանիշներն ու հականիշները. բառերը փոխարինել իրենց հոմանիշներով)
Ժամ	Էջ	Դաս

6/1		Էդ.Ավագյան, «Արտաշես և Սաթենիկ», 1-ին մաս: Վերջաբանցներ
6/1	135-136	Էդ.Ավագյան, «Արտաշես և Սաթենիկ», 2-րդ մաս: Վերջաբանցներ
6/1	135-136	Էդ.Ավագյան, «Արտաշես և Սաթենիկ», 3-րդ մաս: Վերջաբանցներ
6/1	135-136	Էդ.Ավագյան, «Արտաշես և Սաթենիկ»
6/1	135-136	Էդ.Ավագյան, «Արտաշես և Սաթենիկ»
6/1	136	Էդ. Ավագյան, «Արտաշես և Սաթենիկ»
2/1	137	Պ. Սևակ «Էրեբունի-Երևան»
2/1	137	Պ. Սևակ, «Էրեբունի-Երևան»
2/1	137	Հ. Սահյան «Երևան»
2/1	137	Հ. Սահյան, «Երևան»
1/1		Ամրակայող վարժություններ
1/1	-	Թեմատիկ գրավոր աշխատանք 7
Թեմա	Նպատակ	Վերջնարդյունք
Իմ երկրի գրքերը. ի՛մ գրքերը	• ձևավորել ուսումնական նյութի գաղափարական բովանդակության ընկալման հմտություններ՝ ամրապնդելով բարձրաձայն, հասկանալի և արտահայտիչ ընթերցելու կարողություններ • ձևավորել հիմնավորված դիրքորոշում տեքստի յուրաքանչյուրի բնավորության, արտաքին նկարագրի նկատմամբ • ձևավորել տեքստի հիմնական և երկրորդական մտքերն առանձնացնելու կարողություն	• վերարտադրել ընթերցածի բովանդակությունը՝ հայտնելով ինքնուրույն տեսակետ դեպքերի և հերոսների վարքագծի շուրջ • նախապատրաստվելուց հետո կարդացածի վերաբերյալ հանդես գալ երկխոսությամբ՝ վերարտադրելով ստեղծագործության հերոսի բնավորության առանձնահատկությունները (նույնը՝ ստեղծագործաբար, դերային խաղի միջոցով) • տարբերել բառերն ըստ կազմության, առանձնացնել բառերի բաղադրիչները • տեքստային աշխատանք (գտնել հոմանիշներն ու հականիշները)
Ժամ	Էջ	Դաս
2/1	137-138	Վ. Պետրոսյան, «Հայկական էսքիզներ»: Վերջաբանցներ(ամփոփում)
2/1	137-138	Վ. Պետրոսյան, «Հայկական էսքիզներ»
3/1	149	Մկ.Սարգսյան, «Գրիգոր Նարեկացի», 1-ին մաս: Բառերի տեսակներն ըստ կազմության
3/1	150	Մկ.Սարգսյան, «Գրիգոր Նարեկացի», 2-րդ մաս
3/1	153	Մկ.Սարգսյան, «Գրիգոր Նարեկացի»
1/1	151	«Սուրբ Գրիգոր Նարեկացի»(ըստ Ա.Ղանալանյանի)

3/1	155-158	Ա.Այվազյան, «Գրախանութ»
3/1	155-158	Ա.Այվազյան, «Գրախանութ»
3/1	155-158	Ա.Այվազյան, «Գրախանութ»
1/1		Ամրակայող վարժություններ
1/1	-	Թեմատիկ գրավոր աշխատանք 8
Թեմա	Նպատակ	Վերջնարդյունք
Իմ երկրի գույները	• ընկալել տալ պատմվածքի գաղափարական բովանդակությունը • ծանոթացնել ստեղծագործության ժանրին, նշել առանձնահատկություններ • ձևավորել տեքստի հիմնական ասելիքն առանձնացնելու կարողություն • սովորեցնել հիմնավորված կարծիք հայտնել հերոսներից յուրաքանչյուրի մասին	• վերարտադրել պատմվածքի բովանդակությունը, դեպքերի հաջորդականությունը, թվարկել հերոսներին և բնութագրել • նկարագրել միջավայրը, որտեղ կատարվում են դեպքերը • փորձել հորինել փոքրիկ պատմվածք • տարբերել համադրական և հարադրական բարդությունները, հոդակապով և անհոդակապ բարդությունները • տեքստային աշխատանք (բացատրել անծանոթ բառերը, գտնել հոմանիշներն ու հականիշները)
Ժամ	Էջ	Դաս
5/1	159-160	Վ.Խեչումյան, «Գլուխգործոց», 1-ին մաս: Բարդ բառերի տեսակները
5/1	160 161	Վ.Խեչումյան, «Գլուխգործոց», 2-րդ մաս: Բարդ բառերի տեսակները
5/1	161-162	Վ.Խեչումյան, «Գլուխգործոց», 3-րդ մաս: Համադրական և հարադրական բարդություններ
5/1	162-164	Վ.Խեչումյան, «Գլուխգործոց», 4-րդ մաս: Հոդակապով և անհոդակապ բարդություններ
5/1	165-167	Վ.Խեչումյան, «Գլուխգործոց»
1/1		Ամրակայող վարժություններ
1/1	-	Թեմատիկ գրավոր աշխատանք 9
Թեմա	Նպատակ	Վերջնարդյունք
Իմ երկրի երգերը	• սովորեցնել դուրս բերել տեքստի հիմնական գաղափարը • զարգացնել ստեղծագործական կարողություններ • բառակազմությունը	• վերարտադրել տեքստի բովանդակությունը՝ դրսևորելով վերաբերմունք հերոսների արարքների հանդեպ • նկարագրել միջավայրը, որտեղ կատարվում են դեպքերը • իմանալ միասին, անջատ և գծիկով գրվող

	դիտարկել տալ որպես բառապաշարի հարստացման միջոց • ձևավորել ստեղծագործության հերոսների զգացմունքները, մարդկային հարաբերությունները, գեղեցիկ արարքները գնահատելու կարողություն	բառերի ճիշտ գրությունը • տեքստային աշխատանք(գտնել հոմանիշներն ու հականիշները)
Ժամ	Էջ	Դաս
5/1	168-170	Մ.Գալշոյան, «Կռունկ», 1-ին մաս: Միասին, անջատ, գծիկով գրվող բառեր
5/1	170-172	Մ.Գալշոյան, «Կռունկ», 2-րդ մաս: Միասին, անջատ, գծիկով գրվող բառեր
5/1	173-174	Մ.Գալշոյան, «Կռունկ», 3-րդ մաս
5/1	175-177	Մ.Գալշոյան, «Կռունկ»
5/1	177	Մ.Գալշոյան, «Կռունկ»
1/1	-	Գործնական աշխատանք
Թեմա	Նպատակ	Վերջնարդյունք
Իմ երկրի քարերը	• ընկալել տալ պատմվածքի գաղափարական բովանդակությունը • զարգացնել հայրենաճանաչողու-թյունը • զարգացնել ընթերցանության շնորհիվ յուրացված նոր բառապաշարը սեփական խոսքում գործածելու կարողություն	• վերարտադրել տեքստի բովանդա-կությունը • կարողանալ օգտվել դպրոցական բառա-րաններից (ուղղագրական, բացատրա-կան, հոմանիշների, հականիշների) • տարբերել հապավումների տեսակները, ճիշտ գրել դրանք • տեքստային աշխատանք (գտնել հոմանիշ, հականիշ բառերը, համանունները) • ճիշտ համառոտագրել բառերը • բառերի բառակազմական վերլուծություն (գտնել բառի բաղադրիչները՝ արմատներ, ածանցներ, հոդակապ)
Ժամ	Էջ	Դաս
2/1	178-179	Ա. Բիտով, «Մատենադարան»: Բառարաններ
2/1	180	Ա. Բիտով, «Մատենադարան»
3/1	181-182	Ա.Այվազյան, «Պոեմ վասն շենքի և շինության», 1-ին մաս: Հապավումներ
3/1	183-185	Ա.Այվազյան, «Պոեմ վասն շենքի և շինության», 2-րդ մաս: Հապավումներ
3/1	185-187	Ա.Այվազյան, «Պոեմ վասն շենքի և շինության», 3-րդ մաս
2/1		Արտադասարանական ընթերցանություն
2/1		Արտադասարանական ընթերցանություն

4/1	187, 189	Հ.Սահյան, «Ուր որ նայում եմ»: Համառոտագրություն
4/1	189	Հ.Սահյան, «Ուր որ նայում եմ»: Համառոտագրություն
4/1	188-191	Հ.Սահյան, «Ուր որ նայում եմ»
4/1	189	Հ.Սահյան, «Ուր որ նայում եմ»
4/1	190-192	Վ. Դավթյան, «Զվարթնոցի արծիվը»
4/1	190-192	Վ. Դավթյան, «Զվարթնոցի արծիվը»
4/1	193	Վ. Դավթյան, «Զվարթնոցի արծիվը»
4/1	193	Վ. Դավթյան, «Զվարթնոցի արծիվը»
2/1	191	Ա. Պարսամյան, «Լռություն է»
2/1	191	Ա. Պարսամյան, «Լռություն է»
1/1	—	Թեմատիկ գրավոր աշխատանք 10
Թեմա	Նպատակ	Վերջնարդյունք
Իմ երկրի անխոս բնակիչնե-րը	• ընկալել տալ պատմվածքի գաղափարական բովանդակությունը • սովորեցնել դուրս բերել տեքստի հիմնական գաղափարը • ձևավորել սեր ու հոգատարություն բնության և կենդանիների հանդեպ • ընկալել բառերի և դարձ-վածքների փոխաբերական իմաստները և դրանց ոճա-կան արժեքը պատկերավոր խոսք կազմելիս	• վերարտադրել տեքստի բովանդակությունը՝ դրսևորելով վերաբերմունք հերոսների արարքների հանդեպ • նկարագրել միջավայրը, որտեղ կատարվում են դեպքերը • կազմել նախադասություններ՝ բազմակի անդամներով (գլխավոր և երկրորդական) • նախադասության գլխավոր անդամները բնութագրել բազմակի լրացումներով • տեքստում գտնել փոխաբերական իմաստով գործածված բառերը • տեքստից դուրս բերել պատկերավորման միջոցները(մակդիր, համեմատություն, փոխաբերություն) • կազմել նկարագրական բնույթի խոսք
Ժամ	Էջ	Դաս
4/1	194-197, 202	Ավ. Իսահակյան, «Եղնիկը»: Նախադասության գլխավոր և երկրորդական անդամներ: Մակդիր
4/1	194-197	Ավ. Իսահակյան, «Եղնիկը»: Նախադասության գլխավոր և երկրորդական անդամներ: Մակդիր
4/1	198-202	Ավ. Իսահակյան, «Եղնիկը»: Նախադասության բազմակի անդամներ
4/1	201-202	Ավ. Իսահակյան, «Եղնիկը»
6/1	203, 209	Դ. Մուրադյան, «Մազաթափ գամփռը և աշունը», 1-ին մաս: Համեմատություն
6/1	204	Դ. Մուրադյան, «Մազաթափ գամփռը և աշունը», 2-րդ մաս: Համեմատություն

6/1	206, 210	Դ. Մուրադյան, «Մազաթափ գամփռը և աշունը», 3-րդ մաս: Փոխաբերություն
6/1	208-211	Դ. Մուրադյան, «Մազաթափ գամփռը և աշունը»: Փոխաբերություն
6/1	203-208	Դ. Մուրադյան, «Մազաթափ գամփռը և աշունը»: Պատկերավորման միջոցներ
6/1	203-208	Դ. Մուրադյան, «Մազաթափ գամփռը և աշունը»
1/1		Թեմատիկ գրավոր աշխատանք 11
2/1	-	Արտադասարանական ընթերցանություն
2/1	-	Արտադասարանական ընթերցանություն
4/1	211, 212	Ա. Ավագյան, «Մի խուլ դղրդոց…»: Նկարագրություն, բնանկար
4/1	212	Ա. Ավագյան, «Մի խուլ դղրդոց…»: Բնանկար
4/1	212	Ա. Ավագյան, «Մի խուլ դղրդոց…»
4/1	212	Ա. Ավագյան, «Մի խուլ դղրդոց…»
6/1	213	Ակ.Բակունց, «Աշուն էր, պայծառ աշուն…»
6/1	213	Ակ.Բակունց, «Աշուն էր, պայծառ աշուն…»
6/1	213	Ակ.Բակունց, «Աշուն էր, պայծառ աշուն…»
6/1	213	Ակ.Բակունց, «Աշուն էր, պայծառ աշուն…»
6/1	213	Ակ.Բակունց, «Աշուն էր, պայծառ աշուն…»
6/1	213	Ակ.Բակունց, «Աշուն էր, պայծառ աշուն…». ստեղծագործական աշխատանք
1/1		Թեմատիկ գրավոր աշխատանք 12
4/1	214	Հ. Սահյան, «Ժայռից մասուր է կաթում»
4/1	214	Հ. Սահյան, «Ժայռից մասուր է կաթում»
4/1	214	Հ. Սահյան, «Ժայռից մասուր է կաթում»
4/1	214	Հ. Սահյան, «Ժայռից մասուր է կաթում»
2/1	—	Արտադասարանական ընթերցանություն
4/1		Գործնական աշխատանք
4/1		Տարեվերջյան կրկնություն: Բառի ուղիղ և փոխաբերական իմաստ, բազմիմաստություն
4/1		Տարեվերջյան կրկնություն: Բառակազմություն
1/1	—	Տարեվերջյան կրկ •

Դաս 1- Վ. Թոթովենց «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա»

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ո՞վ էր ներկայացված փոքրիկը.
   - հեղինակը
   - մի անծանոթ
2. Ի՞նչ գույն ունեին լեռները.
   - կանաչ
   - կապույտ

3. Ե՞րբ քնեց փոքրիկը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Ներկայացված փոքրիկը հեղինակ Վահան Թոթովենցն է:
2. Լեռներն ունեին կապույտ գույն:
3. Փոքրիկը հոգնեց և քնեց:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. ներկայացնել ստեղծագործության հերոսին,
2. մտապահել կարևորը,
3. համառոտ ներկայացնել դրվագը:

Դաս 2- Վ. Թոթովենց «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա»

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Գույն նշանակող ի՞նչ բառեր կան տեքստում:

2. Ի՞նչ բառակապակցություններ կկազմես.

→ վարդի աստղեր

→ բյուր բույր

3. Ի՞նչ սեռի երեխա էր փոքրիկը:

4. Ի՞նչ է բառը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Տեքստում կան հետևյալ գույները՝ մանուշակագույն, մուգ կապույտ, կապույտ:
2. Կկազմվեն վարդի բույր, բյուր աստղեր բառակապակցությունները:
3. Փոքրիկը տղա երեխա էր:
4. Բառը հնչյուն է կամ հնչյունախումբ, որ իմաստ է արտահայտում:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. տեքստից դուրս գրել գույն նշանակող բառերը,
2. կազմել բառակապակցություններ տրված բառերով,
3. տեքստում գտնել պատասխան նախադասությունը,
4. ընկալել բառը՝ որպես գրավոր և բանավոր խոսքի միավոր:

Դաս 3-Վ. Թոթովենց «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա»

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Մայրիկի խոսքում ո՞ր բառը կլրացնես. «Լուսի՛ն, լուսի՛ն, ե՛կ, էս ..... տղային տա՛ր»:
2. Ի՞նչ նոր բառեր կստանաս, եթե փոխես <u>սար</u> բառի առաջին տառը:
3. Ի՞նչ է նշանակում վիզ բառը.
    - պարանոց
    - ձեռք

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Մայրիկի խոսքում բաց է թողնված չար բառը:
2. Բառերի 1-ին տառերը փոխելով՝ կստանա դար, գար,լար, կար, յար,շար, չար,պար, վար, տար, քար բառերը:
3. Վիզը պարանոցն է:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. ճիշտ լրացնել բաց թողած բառը,
2. բառերի 1-ին տառերը փոխելով՝ նոր բառեր ստանալ,
3. հիշել բառի բացատրությունը:

Դաս 4- Վ. Թոթովենց «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա»

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1.Ի՞նչ տարիքի էր նկարագրվող երեխան. նշի՛ր՝ օգտվելով նկարից։

2. Ի՞նչ նոր բառեր կստանաս, եթե տրված բառերին ավելացնես յ կիսաձայնը՝

ալ վար

բաց բուն

3. Մի բառով ինչպե՞ս կասես՝

հաց թխող_____ ձուկ որսացող_____

հեքիաթներ պատմող_____

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**.**

1. Երեխան մանուկ էր (մոտ 1-1,5 տարեկան)։
2. Կստանա այլ, բայց, վայր, բույն բառերը։
3. Մի բառով կասի՝ հացթուխ, ձկնորս, հեքիաթասաց։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**.**

1. մտապահել տեքստի բովանդակությունը,
2. յ կիսաձայնը ճիշտ տեղում դնել՝ նոր բառ ստանալու համար,
3. գոյական+բայ կաղապարն արտահայտել անձ ցույց տվող բառով։

Դաս 5 -Ս. Խանզադյան «Որպես նախաբան»

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Որտե՞ղ է ծնվել հեղինակը.

- Երևանում
- Զանգեզուրում

2. Ի՞նչ մրգեր են քաղցրանում ձորերի ու կիրճերի մեջ:

3. Քանի՞ բառ կա բարձրահասակ բառում:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Հեղինակը ծնվել է Զանգեզուրում:

2. Ձորերի ու կիրճերի մեջ քաղցրանում են նուռը, խաղողը, թուզը:

3. Բարձրահասակ բառում երկու բառ կա՝ բարձր, հասակ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. նշել հեղինակի ծննդավայրը,
2. հիշել մրգերի անունները,
3. առանձնացնել բառամասերը:

Դաս 6 -Ս. Խանզադյան «Որպես նախաբան»

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ի՞նչ է նշանակում մատուռ.
   - փոքրիկ եկեղեցի
   - փոքրիկ գնդակ
2. Ի՞նչ հագուստ էր հագել տատիկը. նշի՛ր՝ օգտվելով նկարից։

3. Ու՞մ ծննդյան օրն է ծնվել հեղինակը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Մատուռը փոքրիկ եկեղեցին է։
2. Տատիկը հայկական տարազով էր։
3. Հեղինակը ծնվել է իր մոր ծննդյան օրը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. հասկանալ բառի իմաստը,
2. տարբերել ազգային և սովորական հագուստները,
3. նշել, որ հեղինակը և մայրը նույն օրն են ծնվել։

Դաս 7-Ստ. Զորյան «Մի կյանքի պատմություն»

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ինչու՞ է տվյալ վեպը համարվում ինքնակենսագրական:
2. Մոր պատմելով՝ տարվա ո՞ր եղանակին է ծնվել փոքրիկը (նկարը կարող է օգնել քեզ:

3. Ի՞նչ է նշանակում ավետել բառը.
   - լավ լուր հայտնել
   - վատ լուր հայտնել

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Վեպը հեղինակ Ստ. Զորյանի կյանքի պատմությունն է:
2. Փոքրիկը ծնվել է գարնանը:
3. Ավետել նշանակում է լավ լուր հայտնել:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. ասել կարևորը ստեղծագործության մասին,
2. մտապահել կարևորը,
3. ճիշտ բացատրել բառը:

Դաս 8-Ստ. Զորյան «Մի կյանքի պատմություն»

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ի՞նչ է տեղի ունեցել փոքրիկի ծնվելուն պես.
   - Տան զանգն սկսել է ղողանջել:
   - Եկեղեցու զանգերն սկսել են ղողանջել:

2. Ո՞րն է մագիլ բառի հոմանիշը.



ա) ճանկ

բ) կտուց

3. Ինչպիսի՞ մարդ դարձավ նորածինը.

- նշանավոր մարդ
- ավազակ

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Փոքրիկի ծնվելուն պես եկեղեցու զանգերն սկսել են ղողանջել:
2. Մագիլ բառի հոմանիշը ճանկն է:
3. Նորածինը նշանավոր մարդ դարձավ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Համատոտ ներկայացնել բովանդակությունը,
2. նշել բառի հոմանիշը,
3. ասել, որ Զորյանը դարձավ հայ գրականության նշանավոր դեմքերից մեկը:

Դաս 9- Մ. Սարյան «Գրառումներ իմ կյանքից»: Գրքային բառապաշար

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Մասնագիտությամբ ո՞վ է Մարտիրոս Սարյանը.

(բանաստեղծ) (նկարիչ)

2. Ինչերի՞ց էին վախենում Սարյանի ընտանիքի անդամները՝

- գայլերից
- շներից

3. Ո՞րն է աղքատ բառի հոմանիշը, և ո՞րը՝ հականիշը.

հոմանիշ՝ _____ հականիշ՝ _____

(հարուստ, չքավոր)

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Մարտիրոս Սարյանը նկարիչ է:

2. Սարյանի ընտանիքի անդամները վախենում էին գայլերից, որ գիշերները կուտակվում էին շրջակայքում:

3. Աղքատ բառի հոմանիշը չքավորն է, հականիշը՝ հարուստը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. ճանաչել հայ մեծ նկարչին,
2. հիշել ստեղծագործության կարևոր դրվագը,
3. տարբերել հոմանիշներն ու հականիշները:

Դաս 10- Մ. Սարյան «Գրառումներ իմ կյանքից»: Գրքային բառապաշար

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1.Կյանքի ծանր պայմանները չարացրե՞լ էին Սարյանի հորը:

2.Պտղաբեր բառից ո՞ր հնչյունն է «անհետացել»:

3. Բառերը դասավորելով՝ ի՞նչ նախադասություն կկազմես.

է, հայրենիքը, Մեր, Հայաստանն

_____:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Կյանքի ծանր պայմանները չէին չարացրել Սարյանի հորը:
2. Պտղաբեր բառում «անհետացել» է ու ձայնավորը(պտուղ):
3. Կկազմի «Մեր հայրենիքը Հայաստանն է» նախադասությունը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. համառոտ ներկայացնել բովանդակությունը,
2. բառի մեջ գտնել հնչյունափոխությունը,
3. բառերը ճիշտ դասավորելով՝ նախադասություն կազմել:

Դաս 11- Մ. Սարյան «Գրառումներ իմ կյանքից»: Գրքային բառապաշար

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ինչպիսի՞ն էր Սարյանի հայրը (նշի՛ր 2 բառ).

- խելոք
- չար
- բարի

2. Խելոք, բարի, երջանիկ, գեղեցիկ բառերն ինչպիսի՞, թե ինչպե՞ս հարցին են պատասխանում:

3. Ո՞ր բառը չես կիրառում առօրյա խոսքում՝

- կարմիր
- նիզակ
- արմատ

4. Ի՞նչ մասերից է կազմված աշխատասեր բառը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Սարյանի հայրը բարի էր և խելոք:
2. Խելոք, բարի, երջանիկ, գեղեցիկ բառերը պատասխանում են ինչպիսի՞ հարցին:
3. Նիզակ բառը առօրյա խոսքում չի կիրառվում:
4. Աշխատասեր բառը կազմված է աշխատ և սեր բառամասերից:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. նկարագրել հերոսին,
2. ճիշտ հարցադրում տալ բառերին,
3. տարբերել առօրյա խոսքում կիրառվող բառերը,
4. առանձնացնել բառամասերը:

Դաս 12- Մ. Սարյան «Գրառումներ իմ կյանքից»: Գրքային բառապաշար

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Քանի՞ տարեկան էր ստեղծագործության փոքրիկը:
2. Ի՞նչ բարդ բառեր կկազմես՝
   - դար+

,

+ փայտ
3. Ի՞նչ բառակապակցություններ կկազմես գեղեցիկ բառով.
   - աղջիկ
   - պար
   - մեղմօրոր
4. Ի՞նչ տառ կտեղադրես վ-տալ, թա-տ, բա-տ բառերի բաց թողած տեղերում (հուշում՝ տեղադրի՛ր նույն տառը):

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Ստեղծագործության փոքրիկը 3-4 տարեկան էր:
2. Կկազմի դարաշրջան և ձեռնափայտ բարդ բառերը:
3. Գեղեցիկ բառով կկազմի գեղեցիկ աղջիկ, գեղեցիկ պար բառակապակցությունները:
4. Բառերում կտեղադրի միևնույն՝ խ տառը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. մտապահել կարևոր դրվագը,
2. միացնել արմատներն այնպես, որ բարդ բառեր կազմվեն,
3. բառերի ճիշտ ընտրությամբ կազմել բառակապակցություններ,
4. ճիշտ գրել ուղղագրական դժվարություն ունեցող բառերը:

Դաս 13-Հ. Բեկնազարյան «Հուշեր կինոդերասանի և կինոռեժիսորի»

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Որտե՞ղ էր գտնվում այն տունը, որտեղ լույս աշխարհ են եկել հեղինակը, իր եղբայրներն ու քույրերը.
   - Հրազդանի կիրճի եզրին
   - Արաքսի կիրճի եզրին
2. Ի՞նչ է նշանակում «լույս աշխարհ գալ» .
   - մահանալ
   - ծնվել
3. Ո՞ր բառն է նշանակում ջանք.
   - քամի
   - եռանդ
   - ծով

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Այն տունը, որտեղ լույս աշխարհ են եկել հեղինակը, իր եղբայրներն ու քույրերը, գտնվում էր Հրազդանի կիրճի եզրին:
2. «Լույս աշխարհ գալ» նշանակում է ծնվել:
3. Եռանդ բառը ջանք է նշանակում:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. նշել հերոսի բնակության վայրը,
2. բացատրել դարձվածքի իմաստը,
3. իմանալ բառի նշանակությունը:

Դաս 14-Հ. Բեկնազարյան «Հուշեր կինոդերասանի և կինոռեժիսորի»

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ովքե՞ր էին հեղինակի ծնողները:
2. Ի՞նչ է նշանակում «սեր սերմանել» արտահայտությունը:
3. Բարբառ բառի նմանությամբ ինչպե՞ս կգրես հետևյալ բառերը՝
   - թ-թ-ալ
   - մ-մ-ալ

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Հեղինակի մայրը Շուշանիկն էր, հայրը՝ Արտեմի որդի Իվանը:
2. «Սեր սերմանել» արտահայտությունը նշանակում է սեր տարածել, սիրել տալ:
3. Բարբառ բառի նմանությամբ կգրվեն՝ թրթռալ, մրմռալ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. ներկայացնել փոքրիկի ծնողներին,
2. ճիշտ բացատրել փոխաբերական իմաստով արտահայտությունը,
3. օրինակին հետևելով՝ տեղադրել բաց թողած տառերը:

Դաս 15-Հ. Բեկնազարյան «Հուշեր կինոդերասանի և կինոռեժիսորի»

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Հատկանիշ ցույց տվող ո՞ր բառերն են բնորոշ հեղինակի հորը.
   - եռանդուն
   - ծույլ
   - վճռական
   - նախաձեռնող
2. Փոքրիկի հայրն ինչո՞վ էր զարմացնում շրջապատի մարդկանց.
   - լեզուներ ուսումնասիրելու ընդունակությամբ
   - գիրք կարդալով
3. Ո՞ր բառն է առօրյա-խոսակցական.
   - մարզպան
   - գորովագութ
   - իրիկուն

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Հեղինակի հորը բնորոշ են հատկանիշ ցույց տվող հետևյալ բառերը՝ եռանդուն, վճռական, նախաձեռնող:
2. Փոքրիկի հայրը շրջապատի մարդկանց զարմացնում էր լեզուներ ուսումնասիրելու ընդունակությամբ:
3. Իրիկուն բառը առօրյա-խոսակցական է:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. համառոտ ներկայացնել հեղինակի հոր կերպարը,
2. համառոտ պատմել տեքստի այդ հատվածը,
3. գրքային բառերը տարբերել խոսակցական բառերից:

Դաս 16-Հ. Բեկնազարյան «Հուշեր կինոդերասանի և կինոռեժիսորի»

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Նախադասության մեջ ո՞րն է խոսակցական բառը՝

-Գնում է, բամբակը կրում բերում, ածում գետը:

2. Հեղինակի հայրը մայրենի լեզվին ինչպե՞ս էր տիրապետում.

- անթերի
- թերություններով

3. Ո՞րն է աչքածակ բառի գրական ձևը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Նախադասության մեջ ածում բառը խոսակցական է:
2. Հեղինակի հայրը մայրենի լեզվին անթերի էր տիրապետում:
3. Աչքածակ բառի գրական ձևը ագահն է:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. մտապահել բառի և՛ խոսակցական, և՛ գրական ձևերը,
2. տեքստում գտնել այդ հատվածը,
3. գտնել բառի գրական համարժեքները:

Դաս 17-Հովի. Շիրազ «Հորս հիշատակին»

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Որտեղի՞ իրիկվա հովերի հետ էր գալիս Շիրազի հայրը.
   - Շիրակի
   - Տավուշի

2. Ո՞րն է դրախտ բառի հոմանիշը, և ո՞րը՝ հականիշը.

հոմանիշ՝ ———————— հականիշ՝ ————————(եդեմ, դժոխք)

3. Ո՞րն է բոստան բառի գրական համարժեքը.
   - բանջարանոց
   - տնակ

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Շիրակի հովերի հետ էր գալիս Շիրազի հայրը։
2. Դրախտ բառի հոմանիշը եդեմն է, հականիշը՝ դժոխքը։
3. Բանջարանոցն է բոստան բառի գրական համարժեքը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. մտապահել հետաքրքիր դրվագը,
2. տարբերել հոմանիշներն ու հականիշները,
3. իմանալ բառի նշանակությունը։

Դաս 18-Հովի. Շիրազ «Հորս հիշատակին»

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ո՞ր բառն է բաց թողնված տրված նախադասության մեջ.

Կարծես ---------- էր մտնում մեր խրճիթի դռնով ներս...

2. Կընկնի բառի նմանությամբ ինչպե՞ս կփոխես ընտրել, ընդունել բառերը:
3. Ի՞նչ էր տուն բերում հեղինակի հայրը բոստաններից.
   - արևի ջերմությունը
   - հողի բույրը

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Տրված նախադասության մեջ բաց թողնված բառը աշխարհն է:
2. Կընկնի բառի նմանությամբ կստացվի՝ կընտրի, կընդունի:
3. Հեղինակի հայրը բոստաններից տուն էր բերում հողի բույրը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. ճիշտ տեղադրել բաց թողնված բառը,
2. տրված բառի օրինակով կազմել նմանատիպ բառեր,
3. բանաստեղծության մեջ գտնել նշված տողը:

Դաս 19-Վ. Բաբայան «Աստղեր»

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ի՞նչ ցանեց փոքրիկի հայրը.

- գարի
- ցորեն

2. Ի՞նչ բառակապակցություններ կկազմես.

➔ անթիվ շողշողացող

➔ աստղեր մարգարիտներ

3. Ու՞մ նման նայեց հայրը ու հիացավ.

- մոր
- Արարչի

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Փոքրիկի հայրը ցորեն ցանեց։
2. Կկազմվեն անթիվ մարգարիտներ, շողշողացող աստղեր բառակապակցությունները։
3. Արարչի նման հայրը նայեց ու հիացավ։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. համառոտ ներկայացնել դրվագը,
2. կազմել բառակապակցություններ,
3. մտապահել կարևոր տողը։

Դաս 20-Վ. Բաբայան «Աստղեր»

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Շողշողալ բառի նմանությամբ ի՞նչ բառեր կկազմես դողալ, փայլել բառերով:
2. Ո՞րը անթիվ բառի հոմանիշը չէ.
   - անհամար
   - քիչ
   - բյուր
3. Ո՞ր բառը կլրացնես.

   Եվ երկնքում անծիր

   Շողշողացին բազում

   Ցորեն---------- աստղեր:

   - ցորեն
   - անծիր

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Շողշողալ բառի նմանությամբ կկազմվեն դողդողալ, փայլփլել բառերը:
2. Քիչը անթիվ բառի հոմանիշը չէ:
3. Պետք է լրացնել ցորեն բառը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. տրված բառի օրինակով նմանատիպ այլ բառեր կազմել,
2. տարբերել բառի հոմանիշները,
3. Ճիշտ լրացնել բաց թողած բառը:

Դաս 21-Վ. Անանյան «Անձրև»

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ո՞ր լեռների գեղատեսիլ սարահարթում էին խփել վրանները.
   - Դիլիջանի
   - Բազումի
2. Գարնան ուրախ անձրևն ինչե՞ր է արթնացնում երկրի վրա.
   - անթիվ կյանքեր
   - անթիվ ծաղիկներ
3. Ի՞նչ է նշանակում «ահը սրտում» արտահայտությունը:
4. Ո՞ր ամսին է լույս աշխարհ եկել փոքրիկը.
   - օգոստոսին
   - սեպտեմբերին

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Վրանները խփել էին Բազումի լեռների գեղատեսիլ սարահարթում:
2. Գարնան ուրախ անձրևը անթիվ կյանքեր է արթնացնում երկրի վրա:
3. «Ահը սրտում» արտահայտությունը նշանակում է վախեցած:
4. Փոքրիկը լույս աշխարհ է եկել օգոստոսին:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. մտապահել կարևորը,
2. ընկալել կարևորը ստեղծագործության մեջ,
3. բացատրել դարձվածքի իմաստը,
4. հիշել բնագրում նշված ամիսը:

Դաս 22-Վ. Անանյան «Անձրև»

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Հեղինակի խոսքում ո՞ր բառը կլրացնես.
   -Այո՛, աշխարհ գալուն պես ես լողացել եմ ---------- ջրով:
   - օրհնված
   - անձրևի
2. Ի՞նչ 2 հոմանիշ բառեր կասես՝ նայելով նկարին:

3. Տրված նախադասության մեջ ո՞ր բառն է խոսակցական.

Քույրս շալի ճոթը հետ է գցել, նայել ու ճչացել...

4. Գեղջկուհի բառի նմանությամբ ինչպե՞ս կկազմես ընկեր, աշակերտ, բժիշկ բառերով:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Հեղինակի խոսքում բաց է թողնված անձրևի բառը:
2. Նկարում պատկերվածը բարուր է, խանձարուր:
3. Ճոթ բառը առօրյա-խոսակցական է, նշանակում է ծայր:
4. Գեղջկուհի բառի նմանությամբ կկազմվեն՝ ընկերուհի, աշակերտուհի, բժշկուհի:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. ճիշտ լրացնել բաց թողած բառը,
2. տեքստից հասկանալ նկարում պատկերվածը,
3. նախադասության մեջ գտնել խոսակցական բառը,
4. տրված բառի օրինակով կազմել նմանատիպ բառեր:

Դաս 23-Վ. Անանյան «Անձրև»

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Տրված նախադասության մեջ ո՞ր բառերն են հոմանիշներ.

Հիմա էլ պարզ ու հստակ տեսնում եմ քեզ՝ ցուպը ձեռքիդ, ոտաբոբիկ, մեր ամպոտ սարերից հովիտն ես իջնում:

2. Ի՞նչ էր անում տղան անձրևն սկսվելուն պես.
- Կանգնում էր անձրևի տակ և հիմնովին թրջվում:
- Արագ վազում էր տուն:

3. Ի՞նչ ընդհանուր մասնիկ ունեն անշուք, անարատ, անթիվ բառերը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Տրված նախադասության մեջ հոմանիշ բառազույգեր են պարզն ու հստակը:
2. Անձրևն սկսվելուն պես տղան կանգնում էր նրա տակ և հիմնովին թրջվում:
3. Տրված բառերում նույնն է ան մասնիկը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. գտնել հոմանիշ բառերը,
2. համառոտ ներկայացնել տեքստի այդ հատվածը,
3. առանձնացնել բառերի նույն ածանցը:

Դաս 24-Վ. Տերյան «Կարծես թե դարձել եմ ես տուն»

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ի՞նչն էր շարժում մայրը բանաստեղծի վերհուշում.
   - դռնակը
   - իլիկը

2. Ի՞նչ է իլիկը.
   - թել մանելու գործիք
   - ձուկ որսալու ցանց

3. Ինչպիսի՞ն էին մոր ձեռքերը.
   - Նուրբ ու մետաքսե
   - Մաշված ու բարակ

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Բանաստեղծի վերհուշում մայրը իլիկն էր շարժում:
2. Իլիկը թել մանելու գործիք է:
3. Մոր ձեռքերը մաշված էին ու բարակ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. հիշել մոր կատարած աշխատանքը,
2. ճիշտ բացատրել բառը,
3. համառոտ ներկայացնել գլխավոր հերոսին:

Դաս 25- Ե. Չարենց «Մորս համար գազել»

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ո՞ր արտահայտությունն է կրկնվում բոլոր տողերում:
2. Ի՞նչ է նշանակում խորշում:

3. Ինչպե՞ս էր նստել մայրը, երբ հին օրերն էր հիշում.
   - լուռ ու տխուր
   - լուռ և ուրախ

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Բոլոր տողերում կրկնվում է «մայր իմ անուշ ու անգին» արտահայտությունը:
2. Խորշում նշանակում է կնճիռ:
3. Մայրը նստել էր լուռ ու տխուր, երբ հին օրերն էր հիշում:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. մտապահել կրկնվող արտահայտությունը,
2. հիշել բառի բացատրությունը,
3. մտապահել կարևոր դրվագը:

Դաս 26- Ե. Չարենց «Մորս համար գազել»

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ինչպիսի՞ն էին մոր արցունքները, որ ընկնում էին ծեր ձեռքերին.
   - անուշ
   - դառնաղի
2. Բանաստեղծական երկտողում ո՞ր բառերն են հականիշներ.

   Ո՞ւր է արդյոք հիմա նա, ո՞ղջ է արդյոք, թե մեռած,

   Եվ ի՞նչ դռներ է ծեծել, մայր իմ անուշ ու անգին:

3. Ի՞նչ է նշանակում մտորել.
   - մտածել
   - ուրախանալ

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Մոր արցունքները, որ ընկնում էին ծեր ձեռքերին, դառնաղի էին:
2. Բանաստեղծական երկտողում <u>ողջ և մեռած</u> բառերը հականիշներ են:
3. Մտորել նշանակում է մտածել:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. խոսել մտորող մոր կերպարի մասին,
2. գտնել հականիշ բառերը,
3. հասկանալ բառի իմաստը:

Դաս 27-Հովհ. Շիրազ, «Մայրս՝ փոքրիկ, մայրս՝ խեղճ» Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ո՞վ է գրել «Մայրս՝ փոքրիկ, մայրս՝ խեղճ» բանաստեղծությունը:

2. Ո՞ր բառերով է Շիրազը բնութագրել մորը:

3. Շիրազն ինչի՞ն էր նմանեցնում մորը.

արևին լուսնին

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Բանաստեղծությունը գրել է Հովհ. Շիրազը:
2. Շիրազը մորը բնութագրել է խեղճ, փոքրիկ, հասարակ բառերով:
3. Շիրազը մորը նմանեցնում է արևին:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. ճանաչել ստեղծագործության հեղինակին,
2. մտապահել այն բառերը, որոնցով Շիրազը բնութագրել է մորը,
3. ներկայացնել, թե ինչին էր Շիրազը նմանեցնում մորը:

Դաս 28-Հովի. Շիրազ, «Մայրս՝ փոքրիկ, մայրս՝ խեղճ» Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Մորը նվիրված ի՞նչ ստեղծագործություններ կան։
2. Տեքստում ո՞րն է արև բառի հոմանիշը։
3. Մայր բառը ո՞ր մասնիկի հետ բառ կկազմի. –ական, -ուհի։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Կան մորը նվիրված այլ ստեղծագործություններ։
2. Արև բառի հոմանիշը արեգակն է։
3. Մայր բառը ական-ի հետ կկազմի մայրական բառը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. վերհիշել մորը նվիրված այլ ստեղծագործություններ,

2. հիշել բառի հոմանիշները,

3.տրված բառամասերով նոր բառ կազմել։

Դաս 29 - Գ. Մահարի, «Իմ տատը» Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ո՞վ է գրել «Իմ տատը» ստեղծագործությունը:
2. Ո՞ր վեպից է հատվածը:
3. Ի՞նչ էր Մահարու -ի անունը:
   ա . Յուղաբեր

   բ . Կաթնաբեր

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. «Իմ տատը» ստեղծագործությունը գրել է Գ. Մահարին:
2. Հատվածը «Մանկություն» վեպից է:
3. Մահարու տատիկի անունը Յուղաբեր է:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. ներկայացնել հեղինակի կյանքի կարևորագույն դրվագները,
2. մտապահել վեպի վերնագիրը,
3. հիշել հերոսուհու անունը:

Դաս 30 - Գ. Մահարի, «Իմ տատը» Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Քաղաքշական ի՞նչ անունով էր դիմում տատը թոռանը:
2. Ո՞ր բարբառով է գրված տեքստի վերջին նախադասությունը:
3. Նախադասության մեջ ո՞ր իմաստով է կիրառված ոսկի բառը.
   Ոսկի մարդ է գինեգործ Սարգիսը:
   - Ուղիղ
   - Փոխաբերական

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Տատը թոռանը Գուրիս էր անվանում:
2. Տեքստի վերջին նախադասությունը գրված է Վանի բարբառով:
3. Ոսկի բառը նախադասության մեջ կիրառվել է փոխաբերական իմաստով:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. մտապահել տեքստի այդ հատվածը,
2. հիշել, որ հեղինակը գաղթել էր Արևմտյան Հայաստանի Վան քաղաքից,
3. տարբերել բառի ուղիղ և փոխաբերական իմաստները:

Դաս -31 Վ. Դավթյան, «Առաջին հուշ» Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Հեղինակը հասկանո՞ւմ էր տատի խոսքերը:
2. Ի՞նչ է հուշը:
3. Ո՞րն է ծավի բառի հոմանիշը.
   - կապույտ
   - կարմիր

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Հեղինակը չէր հասկանում տատի խոսքերը։
2. Հուշը հիշողության պատառիկ է:
3. Ծավի բառի հոմանիշը կապույտն է:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. համառոտ վերաշարադրել բանաստեղծության բովանդակությունը,
2. ներկայացնել՝ ինչ է հուշը,
3. ասել բառի հոմանիշը:

Դաս 32 - Վ. Դավթյան, «Առաջին հուշ» Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Հեղինակը գիտե՞ր՝ ում է խնդրում տատը։
2. Ինչպիսի՞ն էր տատի դեմքը։
3. Ինչի՞ դեմ էր չոքել տատը՝

ա)  -ի բ) -ի

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Հեղինակը չգիտեր՝ ում է աղերսում տատը։
2. Տատի դեմքը սպիտակ էր և ամպամած։
3. Տատը չոքել էր լուսնի դեմ։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. մտապահել կարևոր դրվագը,
2. նկարագրել հերոսուհուն,
3. ներկայացնել դրվագը։

Դաս 33 - Վ. Դավթյան, «Առաջին հուշ» Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. «Ամպամած դեմք» արտահայտությունը ո՞ր իմաստով է գործածված.
   - ուղիղ
   - փոխաբերական
2. Կարո՞ղ ես կռահել, թե ում է դիմում բանաստեղծի տատը՝
   - Աստծուն
   - մարդկանց
3. Ո՞րն է խրթին բառի հականիշը.
   - դյուրին
   - դժվար

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. «Ամպամած դեմք» արտահայտությունը գործածված է փոխաբերական իմաստով:
2. Բանաստեղծի տատը դիմում է Աստծուն:
3. Խրթին բառի հականիշը դյուրինն է:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. տարբերել ուղիղ և փոխաբերական իմաստները,
2. կռահում անել,
3. նշել բառի հականիշը:

Դաս 34 -Ստ. Զորյան, «Պապն ու թոռը» Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ինչպիսի՞ ստեղծագործություն է պատմվածքը.
   - չափածո
   - արձակ
   -
2. Ի՞նչ է նշանակում «ծանր լսել» արտահայտությունը.
   - լավ լսել
   - վատ լսել
3. Մեկ բառով ինչպե՞ս կասես «վեր կենալ»:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Պատմվածքը արձակ ստեղծագործություն է:
2. «Ծանր լսել» նշանակում է վատ լսել:
3. «Վեր կենալ»-ը մեկ բառով կանգնելն է:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. տարբերել արձակ և չափածո ստեղծագործությունները,
2. նշել «ծանր լսել» արտահայտության համարժեք բառը,
3. հարադիր բայերն արտահայտել մեկ բառով:

Դաս 35 -Ստ. Զորյան, «Պապն ու թոռը» Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Որտե՞ղ է ծնվել Զորյանը.
   - Ղարաքիլիսա
   - Գյումրի

2. Ի՞նչ է Ղարաքիլիսայի այժմյան անվանումը.
   - Լենինական
   - Վանաձոր

3. Ի՞նչ էր հեղինակի պապի անունը.
   - Եղիազար
   - Եփրեմ

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Զորյանը ծնվել է Ղարաքիլիսայում:
2. Ղարաքիլիսայի այժմյան անվանումը Վանաձոր է:
3. Հեղինակի պապի անունը Եփրեմ էր:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. հիշել հեղինակի ծննդավայրի անունը,
2. մտապահել Ղարաքիլիսայի այժմյան անվանումը,
3. տեքստում գտնել համապատասխան հատվածը:

Դաս 36 -Ստ. Զորյան, «Պապն ու թոռը» Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ի՞նչ էր Եփրեմ պապի թոռնուհու անունը.
   - Աստղիկ
   - Արևիկ
2. Ու՞ր գնաց Եփրեմ պապը Աստղիկի հետ.
   - անտառ
   - ծով
3. Ճանապարհին ի՞նչ էր տեսնում Եփրեմ պապը.
   - անցած-գնացած հուշերը
   - իր կողքին քայլող Աստղիկին

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Եփրեմ պապի թոռնուհու անունը Աստղիկ էր։
2. Եփրեմ պապն ու Աստղիկը գնացին անտառ։
3. Եփրեմ պապին ուղեկցում էին անցած-գնացած հուշերը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. հիշել հերոսուհու անունը,
2. մտապահել և տեքստում գտնել համապատասխան հատվածը,
3. նկարագրել կերպարին։

Դաս 37 -Շ. Ազնավուր, «Ազնավուրը Ազնավուրի մասին» Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ո՞վ է Շ. Ազնավուրը.

- երգիչ
- նկարիչ

2. Որտե՞ղ է ծնվել Շ. Ազնավուրը.

- Փարիզում
- Հայաստանում

3. Ովքե՞ր էին Ազնավուրի ծնողները.

- Քնար և Միշա
- Վարդուհի և Արմեն

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Ազնավուրը ֆրանսիահայ երգիչ է:
2. Ազնավուրը ծնվել է Փարիզում:
3. Ազնավուրի ծնողներն են Քնարը և Միշան:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. ճանաչել մեծ հային ու արվեստագետին,
2. նշել Ազնավուրի ծննդավայրը,
3. հիշել Ազնավուրի ծնողների անունները:

Դաս 38 -Շ. Ազնավուր, «Ազնավուրը Ազնավուրի մասին» Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ի՞նչ էր Շ. Ազնավուրի քրոջ անունը.
   - Ալիսա
   - Աիդա

2. Ո՞վ էր փոքրիկ մոր պես խնամում Ազնավուրին.
   - քույրը
   - տատիկը

3. Ո՞րն է տաբատ բառի հոմանիշը.
   - շալվար
   - վերնաշապիկ

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Ազնավուրի քրոջ անունը Աիդա է:
2. Փոքրիկ մոր պես քույրն էր խնամում Ազնավուրին:
3. Տաբատ բառի հոմանիշը շալվարն է:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. մտապահել Ազնավուրի քրոջ անունը,
2. տեքստում գտնել համապատասխան հատվածը,
3. նշել բառի հոմանիշը:

Դաս 39 -Շ. Ազնավուր, «Ազնավուրը Ազնավուրի մասին» Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ինչպիսի՞ տեսք ուներ Ազնավուրը փոքր ժամանակ։
   ա . թմբլիկ
   բ. նիհար

2. Փոքր ժամանակ ինչպիսի՞ն էին Ազնավուրի այտերը։
   ա . գունատ
   բ. կարմիր

3. Ո՞րն է գունատ բառի հոմանիշը։
   ա . անգույն
   բ. գունավոր

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Փոքր ժամանակ փոքրիկը թմբլիկ էր։
2. Ազնավուրի այտերը գունատ էին։
3. Գունատ անգույն է նշանակում։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. տեքստում գտնել համապատասխան հատվածը,
2. նկարագրել հերոսին,
3. նշել բառի հոմանիշը։

Դաս 40 -Շ. Ազնավուր, «Ազնավուրը Ազնավուրի մասին» Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ինչե՞րն էին վկայում Ազնավուրի մանկության մասին։
   ա . նկարները
   բ. պատմվող հուշերը

2. Ի՞նչ է նշանակում իղձ բառը։

   ա . ցանկություն
   բ. գիտություն

3.Ինչպե՞ս կհամապատասխանեցնես, որպեսզի ստանաս հոմանշային զույգեր.

գովել	աղաչել
գեղեցիկ	չքնաղ
խնդրել	գովերգել

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Ազնավուրի մանկության վկաները նկարներն էին։
2. Իղձ նշանակում է ցանկություն։
3. Կկազմի հետևյալ հոմանիշ բառազույգերը.
   - գովել – գովերգել
   - խնդրել – աղաչել
   - գեղեցիկ – չքնաղ

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1.համառոտ նկարագրել տեքստի կարևոր դրվագը
2.մտապահել բառի հոմանիշը
3. հոմանշային բառազույգեր կազմել։

Դաս 41– Շ. Ազնավուր, «Ազնավուրը Ազնավուրի մասին»: Հոմանիշ բառեր

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ո՞րն է ուժեղ բառի հոմանիշը, և ո՞րը՝ հականիշը.

հոմանիշ՝ _____ հականիշ՝ _____

(հզոր, թույլ)

2. Ձյունիկի նմանությամբ ի՞նչ բառեր կկազմվեն ձող, մուկ բառերով։

3. Ո՞ր բառերը կարող են մարդկանց անուններ լինել.

☐ ռազմիկ ☐ սար ☐ քնար ☐ գիր ☐ գոռ

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Ուժեղ բառի հոմանիշը հզորն է, հականիշը՝ թույլը։

2. Ձյունիկի նմանությամբ կկազմվեն ձողիկ, մկնիկ բառերը,

3. Անձնանուններ են Ռազմիկը, Քնարը, Գոռը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. տարբերել հոմանիշներն ու հականիշները,

2. բառի օրինակով (-իկ ածանցով)կազմել նոր բառեր,

3. նշել անձնանունները։

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Մաքուր և պղտոր բառերը հոմանիշնե՞ր են, թե՞ հականիշներ։

2. Բառերի 1-ին տառերը փոխելով՝ ի՞նչ նոր բառեր կստանաս. քար, հող, ձյուն, նուռ։

3. Ային վերջածանցը ո՞ր բառի հետ նոր բառ կկազմի. անտառ, մեծ։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Մաքուր և պղտոր բառերը հականիշներ են։

2. Բառերի 1-ին տառերը փոխելով՝ կստացվեն դար/սար/, փող/դող/, սյուն, դուռ/բուռ/ բառերը։

3. Այինը բառ կկազմի անտառ բառի հետ՝ անտառային։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. տարբերել հականիշները,

2. բառերի 1-ին տառերը փոխելով՝ նոր բառեր ստանալ,

3. վերջածանց/ներ/ով բառ/եր/ կազմել։

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ո՞ր վանքն էր գրավել Լենկթեմուրը.

☐ Նարեկավանք ☐ Գոշավանք

2. Ի՞նչն էր անհնար քերել գրքի նկարներից.

☐ երկաթը ☐ ոսկին

3. Բառերից որո՞ւմ յ-ն չպիտի գրվի.

☐աշխույժ ☐քնքույշ ☐զգույշ

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Լենկթեմուրը գրավել էր Գոշավանքը։

2. Ոսկին էր անհնար քերել նկարներից։

3. Յ-ն չպիտի գրվի քնքուշ բառում։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. մտապահել և նշել վանքի անունը,

2. մտապահել կարևոր դրվագը,

3. ճիշտ գրել ուղղագրական դժվարություն ունեցող բառերը։

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ի՞նչն էր ուզում խլել Լենկթեմուրը։

☐ հագուստը ☐ ոսկիները

2. Ի՞նչ է նշանակում «Գիրքը ձեռքն առավ».

☐ Գիրքը գնեց։ ☐ Գիրքը վերցրեց։

3. Որս բառը ո՞ր մասնիկի հետ բառ կկազմի. –որդ, -ուրդ։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Լենկթեմուրն ուզում էր խլել ոսկիներն ու թանկարժեք քարերը։

2. «Գիրքը ձեռքն առավ» նշանակում է «Գիրքը վերցրեց»։

3. Որս բառը որդ-ի հետ կկազմի որսորդ բառը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. ներկայացնել կարևոր դրվագը,

2. ընտրել նախադասության ճիշտ բացատրությունը,

3. տրված բառամասերով նոր բառ կազմել։

Դաս 106 – Մկ. Սարգսյան, «Գրիգոր Նարեկացի» Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Որդին ո՞ր գիրքն է կարդում մայրիկի համար.

☐«Մաուգլին»

☐«Նարեկը»

2. Ի՞նչ է նշանակում բազմագույն.

մի գույնի շատ գույներով

3. Ո՞րն է փոխաբերական իմաստով. «Մկրատը չէր կտրում», «Աչքը չէր կտրում»։

4. Ո՞րն է փայլել բառի հոմանիշը.

դողալ լողալ շողալ

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Որդին մայրիկի համար կարդում է «Նարեկը»։

2. Բազմագույն նշանակում է շատ գույներ ունեցող։

3. Փոխաբերական իմաստ ունի «Աչքը չէր կտրում»-ը։

4. Փայլել բառի հոմանիշը շողալն է։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. նշել գրքի անունը,

2. նշել բառի ճիշտ բացատրությունը,

4. տարբերել ուղիղ և փոխաբերական իմաստները,

5. ընտրել բառի հոմանիշը։

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Մայրիկի խոսքում ո՞ր բառը կլրացնես. «..... անցավ».

գլխացավս ատամնացավս

2. Գլխացավ բառից ո՞ր հնչյունն է «անհետացել»։

3. Ո՞րն է հոմանիշների զույգը, ո՞րը՝ հականիշներինը. էժան-թանկ, լուռ-անձայն։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Պետք է լրացնել գլխացավս բառը։

2. Գլխացավ բառում «անհետացել» է ու ձայնավորը։

3. Հականիշ են էժանն ու թանկը, հոմանիշ են լուռն ու անձայնը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. ճիշտ լրացնել բաց թողած բառը,

2. բառի մեջ գտնել հնչյունափոխությունը,

3. տարբերել հոմանիշներն ու հականիշները։

Դաս 108 – Մկ. Սարգսյան, «Գրիգոր Նարեկացի» Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Քանի՞ բառ կա մայրաքաղաք բառում։

2. Ի՞նչ է նշանակում չքվել.

կանչել կորչել

3. «Գլխացավն ինձ կերավ» նախադասության մեջ կերավ-ը ո՞ր բառով կփոխարինես.

նայեց տանջեց

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Մայրաքաղաք բառում երկու բառ կա՝ քաղաք, մայր։

2. Չքվել նշանակում է կորչել։

3. Կերավ-ին փոխարինում է տանջեց-ը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. առանձնացնել բառամասերը,

2. ճիշտ բացատրել բառը,

3. հասկանալ բառի փոխաբերական իմաստը։

Դաս 109-«Սուրբ Գրիգոր Նարեկացի»(ըստ Ա.Ղանալանյանի) Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ի՞նչ անթույլատրելի բան էր արել Նարեկացին։

2. Ի՞նչ հրաշք գործեց Գրիգորը։

3. Ո՞րն է չարախոսել բառի հոմանիշը.

☐ շատախոսել ☐ վատախոսել

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Նարեկացին պասի օրը միս էր դրել սեղանին։

2. Նարեկացին կենդանացրեց աղավնիներին։

3. Չարախոսել բառի հոմանիշը վատախոսելն է։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. համառոտ պատմել եղելությունը,

2. խոսել Գրիգորի գործած հրաշքի մասին,

3. նշել բառի հոմանիշը։

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ո՞ր գիրքն էր ուզում գնել տղան.

☐ «Փոքրիկ իշխանը»

☐ «Երեք հրացանակիրները»

2. Ինչպիսի՞ն էին հրացանակիրները(2 բա՛ռ նշիր).

☐ ընկերասեր ☐ վախկոտ ☐ արդարամիտ

3. Ի՞նչ բառակապակցություններ կկազմես.

ակնոցավոր → պարան _____

երկար → ծերուկ _____

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Տղան ուզում էր գնել «Երեք հրացանակիրները» գիրքը։

2. Հրացանակիրներն ընկերասեր էին և արդարամիտ։

3. Կկազմվեն ակնոցավոր ծերուկ, երկար պարան բառակապակցությունները։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. նշել հերոսի սիրած գրքի անունը,

2. նկարագրել սիրած գրքի հերոսներին,

5. կազմել բառակապակցություններ։

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Տղան գնե՞ց իր երազած գիրքը։

2. Քանի՞ բառ կա գրախանութ բառում։

3. Ո՞ր տառն է բաց թողած խե-ճ և խի-ճ բառերում։

4. Ո՞րն է ճիշտ՝ ապակիի՞, թե՞ ապակու։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Տղան այդպես էլ չգնեց իր երազած գիրքը։

2. Գրախանութ բառում կա երկու բառ՝ գիր, խանութ։

3. Բաց է թողած ղ տառը։

4. Ճիշտ է ապակու ձևը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. համառոտ ներկայացնել հերոսի «ձախողումը»,

2. տարբերել բառերն ըստ կազմության,

3. ճիշտ գրել ուղղագրական դժվարություն ունեցող բառերը,

4. ընտրել բառի ճիշտ ձևը։

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ժպիտ բառը որի՞ հետ նոր բառ կկազմի. տուն, երես։

2. Ի՞նչ է նշանակում լեզուն կապ ընկնել՝ գոռա՞լ, թե՞ լռել։
3. Ո՞րն է ճիշտ՝ քեռիի՞, թե՞ քեռու։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Ժպիտը երեսի հետ կկազմի ժպտերես բառը։

2. Լեզուն կապ ընկնել նշանակում է լռել, պապանձվել։

3. Ճիշտ է քեռու ձևը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. տրված բառերով նոր բառ կազմել,

2. նշել դարձվածքի իմաստը,

3. ընտրել բառի ճիշտ ձևը։

Դաս 113– Վ. Խեչումյան, «Գլուխգործոց» Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ո՞վ էր Երիցակը։

☐ Հեքիաթ գրող էր։ ☐ Գիրք նկարազարդող էր։

2. Երիցակը Մոմիկի իսկակա՞ն պապն էր։

3. Որտե՞ղ էին ապրում Երիցակն ու Մոմիկը.

☐ Անի քաղաքում ☐ գյուղում

4. Շնչավոր և անշունչ բառերը հոմանիշնե՞ր են, թե՞ հականիշներ։

5. Քանի՞ արմատ կա հեքիաթագիր և նկարազարդ բառերից յուրաքանչյուրում։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Երիցակը գիրք նկարազարդող էր։

2. Մոմիկի իսկական պապը չէր։

3. Երիցակն ու Մոմիկն ապրում էին գյուղում։

4. Շնչավոր և անշունչ բառերը հականիշներ են։

5. Տրված բառերից յուրաքանչյուրում կա 2-ական արմատ՝ հեքիաթ և գիր, նկար և զարդ։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. համառոտ ներկայացնել գլխավոր հերոսին,

2. համառոտ խոսել հերոսների մասին,

3. նշել հերոսների բնակության վայրը,

4. տարբերել հականիշները,

5. առանձնացնել բարդ բառերի արմատները։

Դաս 114– Վ. Խեչումյան, «Գլուխգործոց» Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ի՞նչ պատկերներով էր պապը նկարազարդում տառերը(2 բա՛ռ նշիր).

☐ թռչունների ☐ մատիտների ☐ կենդանիների



2. Ի՞նչ է ճոպանը. այն կարող է ոլորվե՞լ, թե՞ մոլորվել։

3. Ո՞րն է գիրք, դեպք, աչք, ոտք բառերի մեկտառանոց ածանցը։

4. Ինչպիսի՞ն կարող է լինել տունը (2 բա՛ռ ընտրիր).

☐ հին ☐ փափուկ ☐ քարե

5. Ո՞ր տառերն են բաց թողած թ-չուն, տար-ինակ, թու-թ բառերում։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Երիցակը կենդանիների ու թռչունների պատկերներով էր նկարազարդում տառերը։

2. Ճոպանը պարանն է և կարող է ոլորվել։

3. Գիրք, դեպք, աչք, ոտք բառերի մեկտառանոց ածանցը ք-ն է։

4. Տունը կարող է լինել քարե, հին։

5. Բաց են թողած ռ, օ, ղ տառերը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. նկարագրել գլխավոր հերոսի գործը,

2. բացատրել բառի իմաստը,

3. առանձնացնել ածանցը,

4. ճիշտ հատկանիշներով բնութագրել առարկան,

5. ճիշտ գրել դժվար ուղղագրություն ունեցող բառերը։

Դաս 115– Վ. Խեչումյան, «Գլուխգործոց» Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ճամփորդը ներկի դիմաց ի՞նչ տվեց Երիցակին.

☐ ոսկի ☐ աղոթագիրք 

2. Բառերից ո՞ր երկուսը բառակապակցություն կկազմեն.

ցուրտ գիրք օր _____

3. Բառերից որի՞ հետ սուր-ը կստանա փոխաբերական իմաստ. դանակ, լեզու։

4. Սարեսար-ի նմանությամբ ի՞նչ բառ կկազմես թաղ բառով։

5. Ուհի վերջածանցը որի՞ հետ բառ կկազմի.

քույր բժիշկ կին _____

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Ճամփորդն աղոթագիրք տվեց Երիցակին։

2. Բառակապակցություն կկազմեն ցուրտ և օր բառերը։

3. Սուրը փոխաբերաբար կգործածվի լեզու բառի հետ։

4. Սարեսարի նմանությամբ կկազմվի թաղեթաղ բառը։

5. Ուհի վերջածանցը բժիշկ բառի հետ կկազմի բժշկուհի բառը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. մտապահել կարևոր դրվագը,

2. բառակապակցություն կազմել,

3. տարբերել բառի փոխաբերական իմաստը,

4. տրված բառի օրինակով կազմել նմանատիպ այլ բառ,

5. վերջածանց/ներ/ով բառ/եր/ կազմել։

Դաս 116 – Վ. Խեչումյան, «Գլուխգործոց» Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ի՞նչ է նշանակում ճամփի ծայրը բռնել.

☐ մոլորվել ☐ ճանապարհվել

2. Ծաղիկ և գիր բառերը կազմությամբ պա՞րզ են, թե՞ բարդ։

3. Քանի՞ բառ կա քարայծ բառում։

4. Ո՞ր բառում գծիկ կա՝ մանր մունր, երկրից երկիր։

5. Բառերից ո՞րն է հոդակապով.

☐ անարև ☐ ձեռագիր

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Ճամփի ծայրը բռնելը ճանապարհվելն է։

2. Տրված բառերը կազմությամբ պարզ են։

3. Քարայծ բառում երկու բառ կա՝ քար,այծ։

4. Գծիկով է գրվում մանր-մունր բառը։

5. Հոդակապով է ձեռագիր բառը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. նշել դարձվածքի իմաստը,

2. որոշել բառերի կազմությունը,

3. առանձնացնել բառի մասերը,

4. ընտրել գծիկով գրվող բառը,

5. տարբերել հոդակապով բարդ բառը։

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Բառերից որի՞ հետ սառը կստանա փոխաբերական իմաստ. ջուր, սիրտ։

2. Արմանք-զարմանքի նմանությամբ ինչպե՞ս կասես՝

ալան - թ . . . . . ակաս – պ.....:

3. Ո՞րն է ճիշտ՝ պապո՞ւ, թե՞ պապի։

4. Ո՞րն է օտար բառի հոմանիշը, ո՞րը՝ հականիշը.

հոմանիշ՝ ———————— հականիշ՝ ————————

(հարազատ, խորթ)

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Սիրտ բառի հետ սառը կգործածվի փոխաբերական իմաստով։

2. Գծիկով գրվող բառերն են՝ ալան-թալան, ակաս-պակաս։

3. Գրական ճիշտ ձևն է՝ պապի։

4. Օտար բառի հոմանիշը խորթն է, հականիշը՝ հարազատը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. հասկանալ բառի փոխաբերական իմաստը,

2. կռահել գծիկով գրվող բառերը,

3. ընտրել բառի ճիշտ ձևը,

4. նշել բառի հոմանիշն ու հականիշը։

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ո՞վ է «Կռունկը» պատմվածքի գլխավոր հերոսը.

☐ Կոմիտասը ☐ Սարոյանը 

2. Գյուղից գյուղ-ի նմանությամբ ի՞նչ կստացվի բակ բառով։

3. Վախ բառը -կոտ ածանցի հետ ի՞նչ բառ կկազմի։ _____

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Պատմվածքի գլխավոր հերոսը Կոմիտասն է։

2. Կստացվի՝ բակից բակ։

3. Վախը –կոտի հետ կկազմի վախկոտ բառը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. համառոտ ներկայացնել պատմվածքի գլխավոր հերոսին,

2. անջատ գրությամբ բառ կազմել,

3. տրված բառամասերով բառ կազմել։

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ո՞ր թռչունը կա Կոմիտասի երգում.

☐ ագռավ ☐ կռունկ

2. Ո՞ր բառում գծիկ չպիտի դրվի. թաղից-թաղ, լուրջ-լուրջ։

3. Ինչպե՞ս են գրվում 37, 40, 29 թվականները։

4. Քանի՞ բառ կա ճաշասեղան բառում։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Կռունկն է Կոմիտասի երգում։

2. Գծիկով է գրվում լուրջ-լուրջ բառը։

3. Թվականները գրվում են այսպես՝ երեսունյոթ, քառասուն, քսանինը։

4. Ճաշասեղան բառում երկու բառ կա՝ ճաշ, սեղան։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. մտապահել կարևորը,

2. ընտրել գծիկով գրվող բառը,

3. ճիշտ գրել թվականները,

4. առանձնացնել բառամասերը։

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ո՞րն է փոխաբերական իմաստով. սառը ջուր, սառը դեմք։

2. Ո՞րն է դատարկ բառի հոմանիշը, ո՞րը՝ հականիշը.

հոմանիշ՝ _____ հականիշ՝ _____

(լիքը, փուչ)

3. Բառերը դասավորելով՝ ի՞նչ նախադասություն կկազմես.

մասին, նա, հայրենիքի, երգեց_____:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Սառը դեմքն է փոխաբերական իմաստով։

2. Դատարկ բառի հոմանիշը փուչն է, հականիշը՝ լիքը։

3. Կկազմվի «Նա երգեց հայրենիքի մասին» նախադասությունը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. տարբերել բառի ուղիղ և փոխաբերական իմաստները,

2. ընտրել բառի հոմանիշը և հականիշը,

3. բառերը ճիշտ դասավորելով՝ նախադասություն կազմել։

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Բառերից որի՞ հետ դատարկ-ը փոխաբերական իմաստ կստանա. դույլ, գլուխ։

2. Ո՞ր բառում գծիկ կա. ալիք ալիք, լաց լինել։

3. Մի բառով ինչպե՞ս կասես՝

վեր կենալ_____ մոտ բերել _____

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Դատարկը գլուխ բառի հետ կգործածվի փոխաբերական իմաստով։

2. Գծիկով է գրվում ալիք-ալիք բառը։

3. Մի բառով կասես՝ կանգնել, մոտեցնել։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. տարբերել բառի ուղիղ և փոխաբերական իմաստները,

2. ընտրել գծիկով գրվող բառը,

3. գործողություն ցույց տվող բառերն արտահայտել մեկ բառով։

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ինչպե՞ս կանվանես խմբերը.

թռչունների՝ _____

գայլերի՝ _____

2. Ո՞ր բառում գծիկ չպիտի դրվի. տաք-տաք, շունչ-քաշել։

3. Բառերից ո՞րն է պատասխանում ինչպիսի՞ հարցին.

☐ կարոտ ☐ կեղտոտ

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Թռչունների խումբը երամն է, գայլերինը՝ ոհմակը։

2. Գծիկ չկա շունչ քաշել բառում։

3. Ինչպիսի՞ հարցին պատասխանում է կեղտոտ բառը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. անվանել թռչունների և գայլերի խմբերը,

2. ընտրել առանց գծիկի գրվող բառը,

3. ընտրել տրված հարցին պատասխանող բառը։

Դաս 123 – Ա. Բիտով, «Մատենադարան» Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ինչե՞ր են պահվում Մատենադարանում.

☐ գրքեր ☐ հեռախոսներ

2. Որտե՞ղ է կառուցված Մատենադարանը.

☐ դաշտում ☐ բարձունքի վրա

3. Ո՞ր բառն է նույնը անգին և թանկագին բառերում։

4. Քանի՞ բառ կա ձեռագիր բառում։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Մատենադարանում պահվում են ձեռագիր գրքեր։

2. Մատենադարանը կառուցված է բարձունքի վրա։

3. Նշված բառերում նույնն է գինը։

4. Ձեռագիր բառում երկու բառ կա՝ ձեռ և գիր։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. համառոտ ներկայացնել Մատենադարանը,

2. մտապահել կարևորը,

3. առանձնացնել բառերի ընդհանուր մասը,

4. առանձնացնել բառամասերը։

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ինչի՞ նման է «թափվում» Մատենադարանը.

☐ անձրևի ☐ ջրվեժի

2. Քարե բառի նմանությամբ ի՞նչ կստացվի երկաթ, արծաթ բառերով։

3. Ո՞ր բառն է ժամանակ ցույց տալիս.

☐ այգուց ☐ վաղուց

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Մատենադարանը «թափվում է» ջրվեժի նման։

2. Կկազմվեն երկաթե և արծաթե բառերը։

3. Ժամանակ ցույց տվողը վաղուց բառն է։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. համառոտ նկարագրել Մատենադարանը,

2. բառի նմանությամբ կազմել այլ բառեր,

3. նշել ժամանակ ցույց տվող բառը։

Դաս 125 – Ա. Այվազյան, «Պոեմ վասն շենքի և շինության» Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ի՞նչ մասնագիտություն ուներ Թամանյանը.

☐ Երաժիշտ էր։ ☐ Ճարտարապետ էր։

2. Բառերը դասավորելով՝ ի՞նչ նախադասություն կկազմես.

էր, նա, աշխատում, շատ_____:

3. Ո՞ր թվականն է միասին գրվում՝ 47, 500։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Թամանյանը ճարտարապետ էր։

2. Կկազմվի «Նա շատ էր աշխատում» նախադասությունը։

3. Միասին է գրվում քառասունյոթ թվականը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. նշել գլխավոր հերոսի մասնագիտությունը,

2. բառերը ճիշտ դասավորելով՝ նախադասություն կազմել,

3. ճիշտ գրել թվականները։

Դաս 126 – Ա. Այվազյան, «Պոեմ վասն շենքի և շինության» Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ո՞ւմ հետ էր Թամանյանը վերադառնում հայրենիք.

☐ ընկերոջ ☐ ընտանիքի

2. Ակ ածանցով ինչպե՞ս «կփոքրացնես» նավ, լիճ բառերը։

3. Բառերը դասավորելով՝ ի՞նչ նախադասություն կկազմես.

ընտանիքը, Հայաստան, վերադարձավ, մեր

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Թամանյանն ընտանիքի հետ էր վերադառնում։

2. Ակ ածանցով կկազմվեն նավակ, լճակ բառերը։

3. Կկազմվի «Մեր ընտանիքը վերադարձավ Հայաստան» նախադասությունը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. մտապահել կարևոր դրվագը,

2. վերջածանցով բառեր կազմել,

3. բառերը ճիշտ դասավորելով՝ նախադասություն կազմել։

Դաս 127 – Ա. Այվազյան, «Պոեմ վասն շենքի և շինության» Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ո՞ր շենքն է պատկերված նկարում։ Ո՞վ է ճարտարապետը։

2. Ուրիշ ի՞նչ բառով կանվանես հողագունդը.

☐ ձնագունդ ☐ երկրագունդ

3. Հայաստանի Հանրապետությունն ինչպե՞ս կդարձնես 2-տառանոց բառ։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Նկարում Օպերայի և բալետի թատրոնն է, ճարտարապետը՝ Ալ. Թամանյանը։

2. Հողագունդը երկրագունդն է։

3. 2-տառանոց բառը ՀՀ-ն է։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. ճանաչել կարևոր կառույցը և իմանալ ճարտարապետին,

2. նշել բառի՝ նույն իմաստով տարբերակը,

3. բառակապակցությունը դարձնել տառային հապավում։

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ո՞ր երկրի մասին է խոսում բանաստեղծը։

2. Ինչե՞րը կարող են իրականում քարից լինել.

☐ վանք ☐ ժպիտ ☐ խաչքար

3. Որո՞նք են բնության երևույթներ.

☐ ամպրոպ ☐ թմբուկ ☐ ծիածան

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Բանաստեղծը խոսում է քարերի երկիր Հայաստանի մասին։

2. Իրականում քարից կարող են լինել վանքը, խաչքարը։

3. Բնության երևույթներ են ամպրոպը, ծիածանը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. ասել՝ ինչի մասին է բանաստեղծությունը,

2. տարբերել բառի ուղիղ և փոխաբերական գործածությունը,

3. ընտրել բնության երևույթներ մատնանշող բառերը։

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ինչերի՞ երկիր է Հայաստանը.

☐ ծովերի ☐ քարերի

2. Որո՞նք են երաժշտական գործիքներ(նկարները ճի՞շտ տեղում են).

թմբուկ ☐

խաչ ☐

շեփոր ☐

3. Ինչե՞րը կարող են երկար կամ կարճ լինել.

☐ պարանը ☐ ջուրը ☐ ճանապարհը

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Հայաստանը քարերի երկիր է։

2. Երաժշտական գործիքներ են թմբուկն ու շեփորը։

3. Երկար կամ կարճ կարող են լինել պարանը, ճանապարհը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. համառոտ նկարագրել Հայաստանը,

2. ճանաչել երաժշտական գործիքները,

3. բառերին վերագրել ճիշտ հատկանիշներ։

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Բանաստեղծության մեջ ո՞ր բառին շատ հանդիպեցիր.

☐ կարճ ☐ քարե

2. Ո՞րն ունի փոխաբերական իմաստ.

☐ քարից սիրտ ☐ քարից շենք

3. Ո՞ր բառն է նշանակում ձմռան քամի.

☐ սունկ ☐ գույն ☐ բուք

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Շատ հանդիպեց քարե բառին։

2. Փոխաբերական իմաստ ունի «քարից սիրտ» բառակապակցությունը։

3. Ձմռան քամին բուքն է։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. նշել՝ բանաստեղծության մեջ որ բառն է շատ գործածվել,

2. տարբերել ուղիղ և փոխաբերական իմաստները,

3. իմանալ բառի նշանակությունը։

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Բառերը դասավորելով՝ ի՞նչ նախադասություն կկազմես.

Հայաստանը, է, երկիր, քարերի_____

Քարերի սիմֆոնիա

Փ. *Թերլեմեզյան, «Ժայռեր»*

2. Ո՞ր տառն է բաց թողած բար-, մար-, վար- բառերում՝ դ, թե՞ թ։

3. Քարե բառի նմանությամբ ինչպե՞ս կկազմես փայտ, ավազ արմատներով։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Կկազմվի «Հայաստանը քարերի երկիր է» նախադասությունը։

2. Բաց է թողած դ տառը։

3. Կկազմվեն փայտե, ավազե բառերը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. բառերը դասավորելով՝ նախադասություն կազմել,

2. ճիշտ գրել ուղղագրական դժվարություն ունեցող բառերը,

3. օրինակին հետևելով՝ նոր բառեր կազմել։

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Իրակա՞ն արծվի մասին է խոսում բանաստեղծը, թե՞ քարե.

2. Ի՞նչն է պահել արծիվն իր թևերին.

☐ ծառը ☐ գմբեթը

3. Ինչպիսի՞ն է արծիվը.

☐ վախկոտ ☐ հզոր

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Բանաստեղծը խոսում է քարե արծվի մասին։

2. Արծիվն իր թևերին պահել է տաճարի գմբեթը։

3. Արծիվը հզոր է։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. ընկալել կարևորը բանաստեղծության մեջ,

2. մտապահել կարևոր դրվագը,

3. նկարագրել արծվին։

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Թռչուններից ինչո՞ւ է հենց արծիվը քանդակված։

2. Ի՞նչ իմաստով է գործածվել նոր բառը. «Հենց նոր է իջել վերևից»՝

☐ հետո ☐ հիմա

3. Կարո՞ղ ես քո ծննդյան թվի կողքին ամենակարճ ձևով գրել թվական բառը։

_____

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Արծիվը թռչունների արքան է, նրանցից ամենահզորը։

2. Նշված նախադասության մեջ նոր-ը նշանակում է հիմա։

3. Թվական բառի համառոտագրությունը թ. -ն է։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. հիմնավորել քանդակագործի ընտրությունը,

2. գործածության մեջ հասկանալ բառի իմաստը,

3. ճիշտ համառոտագրել բառը։

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Բառերը դասավորելով՝ ի՞նչ նախադասություն կկազմես.

կանչում, նրան, է, երկինքը _____

2. Ո՞ր բառն է պատասխանում ի՞նչ է արել հարցին.

☐ կանչեց ☐ պահել է

3. Ո՞ր բառում է ջ գրվում.

☐ փախ-ել ☐ ի-նել ☐ կոր-ել

4. Ո՞րն է Հովհաննես անունը կրճատելու ճիշտ ձևը.

☐ Հո. ☐ Հովհ.

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Կկազմվի «Երկինքը կանչում է նրան» նախադասությունը։

2. Ի՞նչ է արել հարցին պատասխանում է պահել է բառը։

3. Ջ է գրվում իջնել բառում։

4. Հովհաննես անվան ճիշտ համառոտագրությունն է՝ Հովհ. ։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. բառերը դասավորելով՝ նախադասություն կազմել,

2. ընտրել հարցին պատասխանող բառը,

3. ճիշտ գրել դժվար ուղղագրություն ունեցող բառերը,

4. ճիշտ համառոտագրել անձնանունը։

Դաս 135 – Վ. Դավթյան, «Զվարթնոցի արծիվը» Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Սլանալը դանդա՞ղ գնալն է, թե՞ արագ։

2. Ահեղ բառի նմանությամբ ի՞նչ բառեր կկազմես համ, հյութ արմատներով։

3. Ո՞րն է սավառնել բառի ամենագործածվող հոմանիշը.

☐ թևածել ☐ ճախրել ☐ թռչել

4. Ո՞րն է միլիոն բառը կրճատելու ճիշտ ձևը.

☐ մի. ☐ միլի. ☐ մլն.

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Սլանալը արագ գնալն է։

2. Ահեղի նմանությամբ կկազմվեն համեղ, հյութեղ բառերը։

3. Սավառնել բառի ամենագործածվող հոմանիշը թռչելն է։

4. Միլիոն բառի ճիշտ համառոտագրությունն է՝ մլն.։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. հասկանալ բառի իմաստը,

2. տրված բառի օրինակով նմանատիպ այլ բառեր կազմել,

3. նշել, թե հոմանիշներից որն է ամենագործածվողը,

4. ճիշտ համառոտագրել բառը։

Դաս 136 – Ա. Պարսամյան, «Լռություն է» Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ինչպիսի՞ն է խաչքարը.

☐ վիրավոր ու տխուր ☐ ուրախ ու երջանիկ

2. Ի՞նչ է դուրս եկել «վիրավոր» խաչքարից.

☐ կակաչ ☐ մանուշակ ☐ խատուտիկ

3. Ո՞րը տխուր բառի հականիշը չէ.

☐ ուրախ ☐ արագ ☐ զվարթ

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Խաչքարը «վիրավոր է ու տխուր»։

2. «Վիրավոր» խաչքարից խատուտիկ է դուրս եկել։

3. Արագը տխուր բառի հականիշը չէ։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. նկարագրել խաչքարը,

2. մտապահել կարևոր դրվագը,

3. տարբերել հականիշները։

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ինչպիսի՞ հոտին ենք բույր ասում(ընդգծի՛ր).

սովորական տհաճ հաճելի

2. Ինչե՞րը կարող են բույր ունենալ(ընդգծի՛ր).

օծանելիքը աղբը ծաղիկները

3. Ո՞ր հնչյունն է «անհետացել» ծաղկման բառից։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Բույրը հաճելի հոտն է։

2. Բույր կարող են ունենալ օծանելիքը, ծաղիկները։

3. Ծաղկման բառից «անհետացել է» ի հնչյունը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. տարբերել բառի նրբիմաստները,

2. առարկաներին ճիշտ վերագրումներ անել,

3. գտնել հնչյունափոխությունը։

Դաս 138 – Ավ. Իսահակյան, «Եղնիկը» Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Որտեղի՞ց էր եղնիկը հայտնվել մարդկանց տանը։

2. Ինչպիսի՞ն էր եղնիկը.

☐ կոպիտ ☐ քնքուշ

3. Սովորե՞ց եղնիկը մարդկանց, թե՞ փախչում էր նրանցից։

4. Ի՞նչն է գործողություն կատարողը. «Անտառից փչում էր քամին»՝

☐ անտառից ☐ քամին

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Պատմողի բարեկամ մի որսորդ էր եղնիկին նվեր բերել երեխաներին։

2. Եղնիկը քնքուշ էր։

3. Սովորել էր մարդկանց, չէր վախենում ու չէր փախչում նրանցից։

4. Գործողություն կատարողը քամին է։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. մտապահել կարևորը,

2. համառոտ նկարագրել եղնիկին,

3. խոսել եղնիկի վարքի մասին,

4. նշել գործողություն կատարող առարկան։

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ինչպե՞ս էր եղնիկը շփվում երեխաների հետ։

2. Ինչի՞ն էր երկար նայում եղնիկը.

☐ այգու ծառերին ☐ հեռու սարերին

3. Ո՞ր բառը կլրացնես. «Եղնիկը . . . էր կարոտել».

☐ վատ ☐ շատ

4. Ո՞րն է փոխաբերական իմաստով.

☐ շատախոս առու ☐ փոքր առու

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Եղնիկը երեխաների հետ վազվզում էր պարտեզում, նրանց հետ ճաշում էր, նրանց հետ քնում։

2. Եղնիկը երկար նայում էր հեռու սարերին։

3. Պետք է լրացնի շատ բառը։

4. Փոխաբերական իմաստով է շատախոս առուն։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. համառոտ պատմել կարևոր դրվագը,

2. նկարագրել կենդանու ապրումները,

3. ճիշտ լրացնել բաց թողած բառը,

4. տարբերել ուղիղ և փոխաբերական իմաստները։

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ինչպե՞ս ավարտվեց «Եղնիկը» պատմվածքը։

2. Ո՞ր բառը կլրացնես. «Զարմանքից . . . էի կտրել» `

☐ քար ☐ ամպ

3. Ո՞րն է փոխաբերական իմաստով.

☐ ցուրտ աշուն ☐ ոսկե աշուն

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Եղնիկը հեռանում է իր հայրենի անտառները։

2. Պետք է լրացնել քար բառը։

3. Փոխաբերական իմաստով է ոսկե աշունը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. համառոտ ներկայացնել պատմվածքի վերջաբանը,

2. ճիշտ լրացնել բաց թողած բառը,

3. տարբերել ուղիղ և փոխաբերական իմաստները։

Դաս 141– Ավ. Իսահակյան, «Եղնիկը» Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Կամաց բառից քանի՞սը կգրես, որ գծիկով բառ դառնա։

_____

2. Բառի ո՞ր ձևը կլրացնես. «Եղնիկը կարոտում էր .....»՝

☐ անտառով ☐ անտառին

3. Ի՞նչ է նշանակում «Աչքերը կայծակին էին տալիս».

☐ Աչքերը զարմանում էին։ ☐ Աչքերը փայլում էին։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Կամաց բառի կրկնությամբ կազմվում է կամաց-կամաց բառը։

2. Պետք է լրացնել անտառին ձևը։

3. Տրված նախադասությունը նշանակում է «Աչքերը փայլում էին»։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. բառի կրկնությամբ գծիկով գրվող բառ կազմել,

2. ճիշտ լրացնել բաց թողած բառը,

3. նշել նախադասության ճիշտ նշանակությունը։

Դաս 142–Դ. Մուրադյան, «Մազաթափ գամփռը և աշունը» Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ի՞նչ էր հանձնարարված Կարոյին։

2. Ինչո՞ւ էր Կարոն ուզում շուտ կատարել հանձնարարությունը(ընդգծի՛ր).

որ բակում խաղար որ քաղաքում զբոսներ

3. Բառերը դասավորելով՝ ի՞նչ նախադասություն կկազմես.

փետուրների, տերևները, պես, թափվում էին, դեղին

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Կարոյին հանձնարարված էր հոր աշխատավայրից ներկեր բերել։

2. Կարոն ուզում էր զբոսնել քաղաքում։

3. Կկազմվի «Դեղին տերևները թափվում էին փետուրների պես» նախադասությունը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. համառոտ ներկայացնել դրվագը,

2. մտապահել կարևորը,

3. բառերը դասավորելով՝ նախադասություն կազմել։

Դաս 143–Դ. Մուրադյան, «Մազաթափ գամփռը և աշունը» Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Կարոյին ի՞նչ էին պատվիրել ծնողները։

2. Ո՞ր իմաստով է գործածվել եղանակ բառը. «Խնդիրը լուծեցի ուրիշ եղանակով»՝

☐ տարվա եղանակ ☐ անելու ձև

3. Հարցի փոխարեն ո՞ր բառը կլրացնես. «Ի՞նչը ուշանում էր».

☐ տղան ☐ աղջիկը ☐ գնացքը

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Կարոյի ծնողները պատվիրել էին բաճկոնը հագնել, շների հետևից չընկնել։

2. Եղանակ բառը գործածվել է անելու ձև իմաստով։

3. Պետք է լրացնել գնացքը բառը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. հիշել կարևորը,

2. նշել համանուն բառի իմաստը,

3. ճիշտ լրացնել բաց թողած բառը։

Դաս 144–Դ. Մուրադյան, «Մազաթափ գամփռը և աշունը» [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ինչպիսի՞ շուն էր գամփռը(2 բա՛ռ ընդգծիր).

մազաթափ չար ուրախ միայնակ

2. Ինչերի՞ նման էին շան աչքերը.

☐ խաղողի հատիկների ☐ չոր տերևների



3. Ո՞ր բառը կլրացնես. «Ամպերը նստել էին . . . . . »՝

☐ բակով ☐ տանիքին

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Գամփռը մազաթափ, միայնակ շուն էր։

2. Շան աչքերը նման էին չոր տերևների։

3. Պետք է լրացնել տանիքին բառը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. համառոտ նկարագրել շանը,

2. մտապահել հետաքրքիր դրվագը,

3. ճիշտ ընտրել ու լրացնել բաց թողած բառը։

Դաս 145–Դ. Մուրադյան, «Մազաթափ գամփռը և աշունը» Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Կարոն ինչպե՞ս էր զրուցում շան հետ։

2. Հարցի փոխարեն ո՞ր բառը կգրես. «Ինչպիսի՞ շունը տխրում էր»՝

☐ միայնակ ☐ փողոց

3. Բառերը դասավորելով՝ ի՞նչ նախադասություն կկազմես.

գնում էին, ուղտերի, ամպերը, նման _____

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Կարոն շան փոխարեն ինքն էր պատասխանում իր հարցերին։

2. Պետք է գրել միայնակ բառը։

3. Կկազմվի «Ամպերը գնում էին ուղտերի նման» նախադասությունը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. համառոտ ներկայացնել Կարոյի «զրույցը» շան հետ,

2. ճիշտ ընտրել և լրացնել բաց թողած բառը,

3. բառերը դասավորելով՝ նախադասություն կազմել։

Դաս 146 –Դ. Մուրադյան, «Մազաթափ գամփռը և աշունը» Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ինչո՞ւ շունը անուն չուներ(ընդգծի՛ր).

Կորցրել էր։ Մոռացել էր։ Միայնակ էր։

2. Կարոն ի՞նչ անունով կոչեց շանը(ընդգծի՛ր).

Չալո Պստիկ Շարիկ

3. Կարոն ու շունն ընկերացա՞ն։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Շան անանուն լինելը նրա մենակության և բարեկամ չունենալու նշանն էր։

2. Կարոն գամփռին Պստիկ անվանեց։

3. Կարոն ու շունն ընկերացան։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. ներկայացնել կարևոր դրվագը,

2. մտապահել կարևորը,

3. համառոտ պատմել վերջաբանը։

Դաս 147 –Դ. Մուրադյան, «Մազաթափ գամփռը և աշունը» Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ո՞րն է փոխաբերական իմաստով.

☐ վարար անձրև ☐ չարաճճի անձրև

2. Բառերից ո՞ր երկուսը բառակապակցություն կկազմեն. ծանր, ծույլ, բեռ։

_____

3. Ո՞ր տառն է բաց թողած հա-նել, հո-նել, հո-ատար բառերում՝ գ, թե՞ ք։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Փոխաբերական իմաստով է չարաճճի անձրևը։

2. Բառակապակցություն կկազմեն ծանրը և բեռը՝ ծանր բեռ։

3. Տրված բառերում բաց է թողած գ տառը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. տարբերել ուղիղ և փոխաբերական իմաստները,

2. բառակապակցություն կազմել,

3. ճիշտ լրացնել բաց թողած տառերը։

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ի՞նչը աղմկեց ձորում.

☐ ձյունը ☐ անձրևը

2. Ի՞նչը քշեց ամպերը.

☐ արևը ☐ քամին

3. Ո՞րն է հեռու բառի հականիշը.

☐ մատ ☐ միտ ☐ մոտ

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Ձորում աղմկեց անձրևը։

2. Քամին քշեց ամպերը։

3. Հեռու բառի հականիշը մոտն է։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. մտապահել նկարագրական դրվագը,

2. համառոտ պատմել բանաստեղծության հատվածը,

3. նշել բառի հականիշը։

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ինչպիսի՞ն էր քամին.

☐ արագավազ ☐ ծույլ

2. Ի՞նչ ձայներ ես լսում բանաստեղծությունն ընթերցելիս։

3. Ո՞ր բառն է նշանակում ձի.

☐ ձոր ☐ քամի ☐ նժույգ

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Քամին արագավազ էր։

2. Լսում է ամպրոպի, կայծակի, անձրևի, քամու ձայները։

3. Նժույգն է ձին։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. նկարագրել բնության երևույթը,

2. խոսել բանաստեղծությունից ստացած տպավորության մասին,

3. իմանալ բառի նշանակությունը։

Դաս 150 –Ա. Ավագյան, «Մի խուլ դղրդոց. . . » Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ի՞նչ գույներ ես տեսնում բանաստեղծությունն ընթերցելիս։

2. Ո՞ր բառն է նշանակում ցածր ձայն (ընդգծի՛ր).

գոռոց շշուկ աղմուկ

3. Ո՞ր տառն է բաց թողած մինչ-, անձր-, տեր- բառերում։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Տեսնում է աշնանային վառ դեղինն ու կարմիրը, նժույգի կարմիրը։

2. Շշուկ բառն է նշանակում ցածր ձայն։

3. Տրված բառերում բաց է թողած և տառը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. խոսել բանաստեղծությունից ստացած տպավորության մասին,

2. ճիշտ նշել բացատրված բառը,

3. ճիշտ գրել և-ի ուղղագրության բառերը։

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Բառերից ո՞ր երկուսը բառակապակցություն կկազմեն. հաստաբուն, մութ, ծառ :

2. Ի՞նչը կարող է մարել(ընդգծի՛ր).

քարը ծառը լույսը

3. Սպիտակել բառի նմանությամբ ինչպե՞ս կդարձնես՝

կարմիրը՝ _____ դեղինը՝ _____

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Կազմվող բառակապակցությունն է՝ հաստաբուն ծառ։

2. Կարող է մարել լույսը։

3. Կստացվեն կարմրել, դեղնել։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. բառակապակցություն կազմել,

2. ճիշտ գործածել բառը,

3. օրինակին հետևելով՝ հատկանիշը գործողություն դարձնել։

Դաս 152–Ա. Բակունց, «Աշուն է, պայծառ աշուն…» Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ինչպիսի՞ն էր աշունը.

☐ անգույն ☐ պայծառ

2. Ո՞րն է ճիշտ՝ քամի՞, թե՞ քամու։

3. Բառերը դասավորելով՝ ի՞նչ նախադասություն կկազմես.

օդը, էր, մաքուր, շատ _____

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Աշունը պայծառ էր։

2. Ճիշտ է քամու ձևը։

3. Կկազմվի «Օդը շատ մաքուր էր» նախադասությունը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. նկարագրել տարվա եղանակը,

2. նշել՝ բառի որ ձևափոխությունն է ճիշտ,

3. բառերը դասավորելով՝ նախադասություն կազմել։

Դաս 153–Ա. Բակունց, «Աշուն է, պայծառ աշուն…» Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ի՞նչ գույնի էր աշնանային անտառը.

☐ սպիտակ ☐ սև ☐ դեղնակարմիր

2. Ո՞րը մաքուր բառի հականիշը չէ.

☐ կեղտոտ ☐ պարզ ☐ պղտոր

3. Ինչպե՞ս կգրես թվականները.

1-ին _____ 3-րդ _____ 9-րդ _____

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Անտառը դեղնակարմիր էր։

2. Պարզը մաքուրի հականիշը չէ։

3. Թվականները գրվում են այսպես՝ առաջին, երրորդ, իններորդ։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. նկարագրել անտառը,

2. տարբերել հականիշները,

3. ճիշտ գրել թվականները։

Դաս 154 –Ա. Բակունց, «Աշուն է, պայծառ աշուն…» Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ի՞նչ գույներ կան աշնան բնապատկերում։

2. Հարցի փոխարեն ո՞ր բառը կգրես. «Արևածաղիկը ի՞նչ արեց».

☐ ժպտաց ☐ ժպտում էր

3. Բառամասերը միացնելով՝ ի՞նչ բառեր կստանաս.



Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Բնապատկերում կան դեղնակարմիրը, սիմինդրների կանաչը, արևածաղկի դեղինը։

2. Պետք է գրել ժպտաց բառը։

3. Կկազմվեն քարափ, ծովափ, լողափ բառերը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. ներկայացնել աշնան գույները,

2. ճիշտ լրացնել բաց թողած բառը,

3. օրինակին հետևելով՝ նոր բառեր կազմել։

Դաս 155 –Ա. Բակունց, «Աշուն է, պայծառ աշուն…» Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ի՞նչ ծառերի հանդիպեցիր աշնան բնապատկերում։

2. Զորակի նմանությամբ ի՞նչ բառեր կկազմես գունդ, գետ արմատներով։

3. Անտառի հետ ո՞ր բառը բառակապակցություն կկազմի.

հաստ խիտ _____

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Բնապատկերի ծառերն են կաղնին, կեռասենին։

2. Զորակի նմանությամբ կկազմվեն գնդակ, գետակ բառերը։

3. Կազմվող բառակապակցությունն է՝ խիտ անտառ։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. թվարկել տեքստում հանդիպող ծառերը,

2. տրված բառի օրինակով նոր բառեր կազմել,

3. բառակապակցություն կազմել։

Դաս 156–Ա. Բակունց, «Աշուն է, պայծառ աշուն…» Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Բառերից ո՞ր երկուսը բառակապակցություն կկազմեն. ձոր, հաստ, հեռու։

_____

2. Ո՞ր բառն է սխալ գրված.

☐ գյուղ ☐ ձյուն ☐ ճուղ

3. Ո՞ր բառը կլրացնես. « . . . . . աշուն էր».

☐ փոքր ☐ պայծառ

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Կկազմվի հեռու ձոր բառակապակցությունը։

2. Սխալ է գրված ճյուղ բառը։

3. Պետք է լրացնել պայծառ բառը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. բառակապակցություն կազմել,

2. ուղղել ուղղագրական սխալը,

3. ճիշտ լրացնել բաց թողած բառը։

Դաս 157–Ա. Բակունց, «Աշուն է, պայծառ աշուն…» Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ի՞նչ ընդհանուր ածանց կա մասրենի և կեռասենի բառերում(նկարների մոտ գրի՛ր՝ որը որն է)։

_____

_____

2. Ո՞ր հնչյունն է փոխվել թփեր և թրեր բառերում։

3. Ո՞ր բառում է ն տառն ավելորդ.

☐ տերևներ ☐ ծառներ ☐ անտառներ

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Տրված բառերում ընդհանուր է -ենի ածանցը։

2. Նշված բառերում փոխվել է ու ձայնավորը։

3. Ն տառն ավելորդ է ծառներ բառում։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. առանձնացնել բառերի ընդհանուր ածանցը,

2. նշել հնչյունափոխությունը,

3. ուղղել հոգնակիի կազմության սխալը։

Դաս 158 –Հ. Սահյան, «Ժայռից մասուր է կաթում» Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ի՞նչ է առուն.

☐ օվկիանոս ☐ գետակ

2. Ո՞րն է փոխաբերական իմաստով.

☐ Անձրև է կաթում։ ☐ Մասուր է կաթում։

3. Աշուն, անուշ, կուժ բառերում ի՞նչ բառեր կան «թաքնված»։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Առուն գետակն է։

2. Փոխաբերական իմաստով է «Մասուր է կաթում» նախադասությունը։

3. Տրված բառերում «թաքնված» են շուն, նուշ, ուշ, ուժ բառերը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. հասկանալ բառի իմաստը,

2. նշել փոխաբերական իմաստով նախադասությունը,

3. գտնել «թաքնված» բառերը։

Դաս 159 –Հ. Սահյան, «Ժայռից մասուր է կաթում» Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ինչպիսի՞ն է առուն (2 բա՛ռ ընդգծիր).

աշխույժ ծույլ բարի

2. Ո՞րն է փոխաբերական իմաստով.

☐ վարար առվակ ☐ շատախոս առվակ

3. Այնպես բառի ն տառը փոխելով՝ ի՞նչ բառեր կստացվեն.

_____

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Առուն բարի է, աշխույժ։

2. Փոխաբերական իմաստով է շատախոս առվակը։

3. Կստացվեն այսպես, այդպես բառերը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. նշել առվի հատկանիշները,

2. տարբերել ուղիղ և փոխաբերական իմաստները,

3. բառի մի տառը փոխելով՝ ստանալ նոր բառեր։

Դաս 160 –Հ. Սահյան, «Ժայռից մասուր է կաթում» Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ի՞նչ գույներով կպատկերես բանաստեղծությունը։

2. Ի՞նչ բառակապակցություններ կկազմես.

կուժ ← ուշ _____

աշուն ← կավից _____

3. Յ-ն ո՞ր բառում է գրվում(ընդգծի՛ր).

անուշ աշխուժ քնքուշ

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Կարող է օգտագործել աշունը պատկերող կարմիրը, դեղինը, նարնջագույնը ևն։

2. Կկազմվեն կավից կուժ և կարմիր մասուր բառակապակցությունները։

3. Յ-ն գրվում է աշխույժ բառում։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. նշել գույները, որոնցով կպատկերի բանաստեղծությունը,

2. կազմել բառակապակցություններ,

3. ճիշտ գրել դժվար ուղղագրություն ունեցող բառերը։

Դաս 161 –Հ. Սահյան, «Ժայռից մասուր է կաթում» Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Բառերը դասավորելով՝ ի՞նչ նախադասություն կկազմես.

սլացավ, պես, քամու, նետը _____

2. Որո՞նք են տրված բառերի հականիշները.

անուշ _____ ուշ _____

(շուտ, դառը)

3. Ակ ածանցով ինչպե՞ս «կփոքրացնես» առու և ձոր բառերը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Կկազմվի «Նետը սլացավ քամու պես» նախադասությունը։

2. Անուշ բառի հոմանիշը դառն է, ուշ բառինը՝ շուտը։

3. Ակ ածանցով կկազմվեն առվակ և ձորակ բառերը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. բառերը դասավորելով՝ նախադասություն կազմել,

2. նշել բառերի հականիշները,

3. -ակ մասնիկով «փոքրացնել» տրված բառերը։